

ԱՆՑԱԾ-ԳՆԱՑԱԾ ՓՈՂԵՐ

Վիպակ

Եղբայրներով են. ինքը, Հակոբը և Հունանը: Առջևում բյուրեղապակյա հարթակի վրա պարող կարմիր զգեստով գնչուհին է, որը հետո, հենց այդպես՝ հարթակով, սկսում է դանդաղորեն սլանալով հեռանալ դեպի հորիզոն: Հարթակը պոկվում է գշուհու ոտքերից ու վայր ընկնելով՝ փշրվում իրենց առջև: Գնչուհին այլևս չի երևում: Մայրը և կինը՝ Անուշը փորձում են ավելելով հավաքել փշուրները: Հակոբն ու Հունանը ոտաբոբիկ են, ապակու փշուրները կոխկրտելով՝ հեռանում են հակադիր ուղղություններով: Նրանց արյունոտ ոտնահետքերն են մնում: Ինքն էլ է ոտաբոբիկ, ինքը ևս ուզում է հեռանալ, սակայն փշուրների վրա անընդհատ սայթաքում է, գայթում, իր ոտնաթաթերն էլ են արյունոտվում, ապակու փշուրներով տարածքը կարծես անվերջ է, ցորենի արտի նման անեզր ու խշխշան...: Արթնացավ: Լավ է՝ երազ էր: Արդեն լուսանում էր ու Սերոբը վեր կացավ անկողնուց, մոտեցավ լուսամուտին, դուրս նայեց: Դրսում ձմեռնամուտի ուժգին քամի էր ու ծառերի խշխշոց: Երազում հենց այսպիսի խշխշոց էր: Ծանր, մղձավանջային երազը, սակայն, կառչել էր նրանից ու չէր պոկվում: Անուշը դեռ քնած է, ինքը սուրճը կեփի: Խոհանոցի ջրի ծորակից էլ կարծես նույն խշշոցը լսվեց: Որոշեց, որ մորը չի պատմի երազը: Մայրը խորապես հավատում է երազներին, մեկնաբանում՝ կապելով լուսնի օրերի հետ, ըստ այդմ՝ ուրախանում կամ տխրում ու տագնապում: Այս երազի մեջ մայրը, անկասկած, վատ նշաններ կտեսնի, կտագնապի և խաչակնքելով՝ կմրմնջա. «Տեր աստված, որը բարին է՝ դու է՛ն կատարի»: Սուրճի բաժակը սեղանին դնելիս՝ ակամայից նայեց պատից կախ օրացույցին. նոյեմբերի երեսունն է՝ 1987 թվականի: Քսան օրից ավագ որդու՝ Բաբիկի տասնամյակն է նշելու: Խոստացել է. հեծանիվ կգնի:

Դանդաղ ու մոլոր քայլերով խոհանոց եկավ Արուսը: Սերոբը անմիջապես նկատեց, որ նա ընկճված ու տառապած տեսք ունի, հազիվ արտաբերեց «բարի լույս»-ն ու նստեց իր դիմաց:

- Ի՞նչ է եղել, մամ ջան, հիվանդ ե՞ս:

- Չէ, հիվանդ չեմ, բայց ավելի վատ վիճակի մեջ եմ:

Սերոբը լարվեց. երազը՝... Արուսը մի կերպ բառերը կապակցելով՝ շարունակեց.

- Մի վեց ամիս առաջ Հակոբը ինձ ութ հարյուր ռուբլի գումար տվեց, որ մեր տանը պահեմ, հետո գա՝ տանի: Ասեց, որ մի երկու ամսից կգա՝ կտանի, թող Սոնան չիմանա: Հիմա էդ գումարը չկա: Դե, որ էդպես ասեց. մի երկու ամսից կտանի՝ էլ ոչ քեզ ասեցի, ոչ էլ՝ Անուշին: Չգիտեմ ի՞նչ անեմ, Հակոբին ո՞նց ասեմ...

Առաջին միտքը, որ անցավ Սերոբի մտքով՝ այն էր, որ մայրը ինչ-որ բան շփոթում է. գուցե Հակոբը իրեն ասել է նման բան, բայց չի արել, սակայն մոր մեջ տպավորվել է ու հիմա... Մեծ կին է, մանր-մունր առիթներով նման դեպքեր էլի են եղել: Իր տանը որևէ իրի, առավել ևս՝ փողի կորուստ չի կարող լինել, իր տանը իր ծննդյան օրից մինչ օրս ոչ մի փակ դուռ կամ դարակ չկա, դրա կարիքը չի եղել ու չկա: Մայրը, հաստատ, խաբկանքի մեջ է:

- Հիմա Հակոբին ի՞նչ ասեմ...,- նորից մրմնջաց Արուսը:

- Թող օրը մի քիչ էլ բացվի՝ միասին գնանք Հակոբի մոտ,- որոշեց Սերոբը, հետո Արուսին այդ հոգեվիճակից հանելու համար կատակեց,- այ մամ ջան, Հակոբը վաղը-մյուս օրը դատավոր ա դառնալու, էդ ութ հարյուր ռուբլին նրա համար ի՞նչ ա, որ էդպես շվարել ես:

- Հարցը մենակ էդ գումարի կորուստը չի...,- հուզմունքը հազիվ զսպելով հառաչեց Արուսը:

Օրը կիրակի էր, ամսվա վերջին օրը: Լսվեց դռան զանգը: «Տանտերը կլինի, եկել է վարձը վերցնելու: Տնաշենը չի էլ համբերում գոնե օրը կիսվի», - մտածեց Հակոբն ու դուռը բացեց: Մայրն էր Սերոբի հետ: Ներս եկան ու ինչպես միշտ՝ գնացին պատշգամբ: Այն խոհանոցին կից սենյակի էր վերածված՝ երկտակ լուսամուտներով ու մանրատախտակ հատակով: Այնտեղ հարմար էր թե սուրճ խմելու և թե զրուցելու համար: Հակոբն անմիջապես նկատեց, որ նրանք անտրամադիր են, մի տեսակ մտածկոտ, ընկճված: Ննջարանից եկավ Սոնան, ժպտերես բարևեց սկեսուրին ու Սերոբին.

- Դե դուք մի քիչ զրուցեք, ես գնամ խանութ՝ սուրճ բերեմ:

Սոնայի գնալուց հետո Հակոբը հարցական հայացքով նայեց մեկ մորը, մեկ՝ Սերոբին.

- Հը՞, ի՞նչ կա, ասելու բան ունե՞ք, ասե՛ք:

Սերոբը, մոր հետ խուսափողական հայացք փոխանակելուց հետո, ասաց.

- Էն քո փողը, որ տվել ես մամային. պահի՛ կորել ա, չկա, չենք գտնում:

-Ի՞նչ փող...,- մեխանիկորեն արտաբերեց Հակոբը,- ախ՛, հա՛, էն ութ հարյուր ռուբլի՞ն...

-Հա:

-Եթե կորել ա, ուրեմն տան ճանապարհին ա անզուշարքար վայր ընկել: Բայց դա մի վեց ամիս առաջ էր. նո՞ր եք իմացել, չեմ հասկանում...

-Չէ, Հակոբ ջան, ճանապարհին չի վայր ընկել,- հուզվելով ասաց Արուսը:
-Տարել եմ տուն, փաթաթել եմ թաշկինակի մեջ ու դրել եմ իմ շորերի դարակի խորքում, բրդե շալիս տակ, ըսկի Սերոբին ու Անուշին էլ չէի ասել: Մտածում էի, որ ժամանակավոր ա. մի օր կգաս, գումարի վրա կավելացնես, կդարձնես կլոր հազար ռուբլի ու կդնենք բանկում իմ անունով, ոնց որ ասել էիր: Որ երեկ զանգեցիր ու ասեցիր, որ գալու ես էդ գործով՝ գնացի, ձեռքս տարա շորերիս տակ, տեսնեմ՝ չկա: Ամբողջ դարակը, պահարանը, հետո տան բոլոր հավանական տեղերը նայել եմ, փնտրել եմ՝ չկա ու չկա...: Սերոբին ու Անուշին պատմեցի, հարցրեցի, բայց իրանք էլ տեղյակ չեն, ինձանից էլ նեղացան, որ իրանցից գաղտնի եմ պահել: Ախր մեր տներում իրարից գաղտնի բան ոչ մի անգամ չի եղել, թե էս անգամ ինչի՞ էսպես եղավ...: Մտածում էի՝ Անուշը հարս ա, կարող ա մորը, քրոջը կամ ախպերներին ասի, կարող ա նրանց մի օր պետք լինի ու գան պարտքով ուզեն. չտանք՝ կնեղանան, տանք՝ բա որ ուշացնեն ու քո տուն ստանալու համար վռազ պետք լինի... Էն էլ էսպես եղավ...

Լռեցին:

- Ես էլ Սոնայից էի գաղտնի պահում,- լռությունը խախտեց Հակոբը,- Իմանար՝ կծախսեր: Մի օր ասում ա. «Աչքս էսինչի մուշտակի վրա մնաց», մի օր՝ «Շրջկոռպի պահեստում ճաշի չեխական սերվիս կա, բա մենք չունենա՞նք», մի օր՝ «Արի էս ամառ գնանք ծովափ» ու եսիմ՝ էլ ինչեր:

- Դե, քանի որ Սոնան չգիտի՝ թող այդպես էլ չիմանա: Փակենք այս թեման: Ես բանկում գումար ունեմ: Վաղը առավոտյան կմտնեմ բանկ և ութ հարյուր ռուբլի կհանեմ՝ կհանդիպենք, կտամ,- վճռական ոտքի կանգնեց Սերոբը:

- Ո՞նց թե...,- շփոթված ոտքի կանգնեց նաև Հակոբը,- Դու ինձ պարտք չես: Կարծում ես՝ ես կվերցնե՞մ քո խնայողությունը, դու ինձ ինչի՞ տեղ ես դրել:

- Պարտք եմ. այդ գումարը ի՛մ տանից ա կորել: Դու դա աշխատել ու կոպեկ-կոպեկ հավաքել ես, որ հենց այդպես՝ իմ տան մեջ կորի՞:

- Նախ՝ կոպեկ-կոպեկ չեմ հավաքել, դա աշխատավարձ էլ չի. գործի բերումով է տարբեր առիթներով ձեռքս եկել,- Հակոբը չէր ցանկանա դա ասել Սերոբին, բայց պահը ստիպեց նրան,- հետո էլ՝ ես մամային եմ տվել, ոչ թե՛ քեզ: Իսկ մաման կյանքում ինձ պարտք լինել չի կարող: Մի՛ բորբոքվիր, այդ

գումարը ջրի բերած էր, ջուրն էլ տարել ա: Չի՛ եղել: Անցած-գնացած լինի: Մոռանանք:

-Հասկանում եմ. դատավորի օգնականի համար կլինեն աշխատավարձից դուրս գումարներ, բայց դա չի կարելի համարել ջրի բերած: Դու, ուրեմն, ինչ-որ մեկի համար ինչ-որ գործ ես կատարել քեզ ռիսկի ենթարկելով և դա վարձատրվել ա, դա քո ռիսկի գինն ա, ոչ թե՛ ջրի բերած: Ի՛մ տանն ա այդ գումարը կորել: Չե՛, չի էլ կորել. տանն ա: Վաղը այդ գումարը կբերեմ:

- Ես արդեն ասացի. երբեք այդ գումարը չե՛մ ընդունի, իզուր բանկից չհանե՛ս:

Լսվեց մուտքի դռան բացվել-փակվելու չիկոցը. Մոնան ներս մտավ, արագ մտավ խոհանոց ու այնտեղից ձայնեց.

- Հիմա սուրճ դնեմ՝ մինչև ճաշը պատրաստ լինի:

Հակոբն ու Սերոբը նստեցին՝ լուռ համաձայնությամբ որոշելով. Մոնան պետք է չիմանա, թե ինչի մասին էին խոսում քիչ առաջ:

Գիշերը վաղուց էր կիսվել, սակայն ծանր ու անհանգիստ մտքերը չէին հեռանում ոչ Հակոբից, ոչ Սերոբից և ոչ էլ Արուսից: Արուսը որդիներին լավ էր ճանաչում ու հասկանում էր, որ այդ չարաբաստիկ գումարը չէչոտ պատ կդառնա նրանց միջև: Հակոբն ու Սերոբն էլ միմյանց լավ էին ճանաչում. Հակոբը համոզված էր, որ Սերոբը վաղը այդ գումարը կհաներ բանկից ու զանգով իրեն կկանչեր՝ վերցնելու այն: Սերոբն էլ համոզված էր, որ Հակոբը իր ձեռքից երբեք չէր վերցնի գումարը, գուցե նաև չէր գա հանդիպման: Ի՞նչ անել, ի՞նչպես վարվել և վերջապես. ի՞նչ եղավ գումարը... Ութ հարյուր ռուբլին քիչ գումար չէ, այն ութից տաս ամսվա աշխատավարձ է և՛ չկա՛: Բայց այսօր դա այդքան էլ կարևոր չէ, կարևորը վաղն է և վաղվանից հետո իրենց ապրելու կերպը. Սերոբը չի կարող չվերադարձնել, Հակոբը չի կարող վերցնել: Ի՞նչ անել...: Հետո Սերոբի հոգնած ուղեղում միտք ծագեց. գումարը բանկից կվերցնի, կտա մայրիկին. գուցե մայրիկը մի ելք գտնի՝ չե՞ որ նա է գումարը Հակոբից վերցրել և վերցրել է Հունանի ներկայությամբ, ուրեմն թող Հունանն էլ միջամտի: Կարծես թե այս միտքը այդ պահին միակ ելքն էր, ճիշտ է՝ մշուշոտ ու կասկածելի ելքով, բայց դե՛ ի՞նչ իմանաս...

Արուսը անցած գիշերն էլ տառապանքով էր լուսացրել: Չէր ուզում Անուշի վրա կասկածել: Նախ, որ Անուշը չգիտեր այդ գումարի մասին և երկրորդ. նրա հետ արդեն տասնմեկ տարի է, ինչ միասին են ապրում, ապրում են մայր ու աղջկա հարազատությամբ և նա շատ անկեղծ ու ազնիվ

է ամեն ինչում, նա նման բան չէր անի, երբէ՛ք: Ամենայն դեպս՝ հարցրեց.

- Իմ շորերի դարակում գումար կար, կարող ա՞ տեղյակ ես:

- Չէ, տեղյակ չեմ,- պատասխանեց Անուշն ու անմիջապէս հարցրեց,- ի՞նչ գումար էր:

- Հակոբն էր տվել, որ պահեմ մեր տանը: Իր բնակարանի բանալիից տանտերն էլ ունի, կասկածում էր, որ մի օր իր ու Սոնայի տանը չեղած ժամանակ տանտերը կարող ա գա, փնտրի, գտնի ու վերցնի:

- Հա՞...,- զարմացավ Անուշը,- ուրեմն դա Հակոբի՞ գումարն էր: Սերոբին էլ չէիր ասե՞լ:

- Չէ, չէի ասել: Չնայած՝ ի՞նչ տարբերություն. ասեի՞, թե՛ չասեի: Հանելուկ ա՛ ի՞նչ եղավ էդ գումարը:- Հետո ավելացրեց,- շատ եմ խնդրում. Սոնային չասես, նա չգիտի՝ Հակոբը նրան չի ասել: Գիտես էլի. Սոնան ծախսող ա: Հակոբը էդ գումարը առանձին ա հավաքել, որ բնակարանի հարցը լուծի: Ինչքա՞ն պիտի վարձով ապրեն:

Առավոտյան Սերոբը սուրճը կրակին դրեց.

- Մամ, Անուշն ուժեղ գլխացավ ունի, երևի չգնա գործի:

- Թող գա սուրճ խմի՝ կանցնի:

- Չի ուզում: Պատկած ա...,- հետո հարցրեց,- ո՞ր դարակում ա բանկի գրքույկը:

Արուսը տեղից բարձրացավ, ուզեց ինչ-որ բան ասել, բայց միայն շուրթերը շարժվեցին ու հազիվ լսելի, կարծես ինքն իրեն՝ ասաց.

- Հիմա կբերեմ:

Ճաշին Սերոբը տուն եկավ, սեղանին դրեց բանկի գրքույկն ու վրան՝ ութ հարյուր ռուբլի գումարը.

- Մամ, իմ ձեռքից Հակոբը չի վերցնելու էս գումարը, երեկ արդեն լսեցիր: Դու վերցրու, գնա Հունանի մոտ, լավ ա՛ կինն ու երեխաները գյուղ են գնացել, Հունանը տանը մենակ կլինի: Տար ու նրա հետ որոշեք, թե ինչ պետք ա անեք: Էնպես որ՝ էս գումարը ետ չգա մեր տուն: Հունանը մեր մեծն ա, Հակոբը գուցե նրան կլսի: Նորից եմ ասում. էս գումարը ետ չբերես, թե չէ՛ պատառ-պատառ կանեմ ու աղբամանը կլցնեմ:

Արուսը կարկամել էր. չգիտեր ասելիքը, չգիտեր անելիքը: Սերոբն այդպէս խիստ, համարյա դաժան և օտարոտի իր հետ երբեք չէր խոսել: Նույնիսկ Անուշի վիճակից չհարցրեց ու առանց ճաշելու գնաց:

Հունանն իր տան առաջին հարկում գտնվող արհեստանոցում էր: Ինչ-որ մեկի ավտոմեքենայի վերանորոգմամբ էր զբաղված: Հիմնական

աշխատանքից հետո ազատ ժամերին նման մասնավոր պատվերներ էր ունենում և գրեթե պարապ չէր մնում: Արուսին տեսնելով՝ թողեց գործը, դուրս եկավ ու նստեցին բակի փայտե նստարանին: Մորը լսելուց հետո երկար լռեց:

- Շվարել եմ, այ բալա...,- շնջաց Արուսը:

Հունանը լավ էր հասկանում, որ միայն տանտիրոջից ու Սոնայից թաքցնելու անհրաժեշտությունը չէր, որ ամիսներ առաջ այստեղ՝ հենց այս արհեստանոցում Հակոբը հավաքած գումարը տվեց մորը ի պահ, ասելով, որ մի քանի ամսից երկու հարյուր ռուբլի էլ կբերի, կավելացնի ու կդարձնի կլոր հազար ռուբլի և այդ ժամանակ թող մայրը ինքն իր անունով դնի բանկում որպես ավանդ: Ուրեմն, Հակոբը նաև զգուշանում էր բանկում իր անվամբ այդ գումարների առկայությունից: Ով գիտի, եթե մի օր գործերը թարավեն՝ իրեն կհարցնեն. որտեղի՞ց քեզ այդ եկամուտը: Գուցե մայրն էլ է ներքուստ Հակոբին այդպես հասկացել ու հենց այդ պատճառով Սերոբին ու Անուշին տեղյակ չի պահել իրեն ի պահ տրված գումարի մասին:

- Էդ քո բերած գումարը, փաստորեն, Սերոբի գումարն ա,- վերջապես խոսեց Հունանը,- Հակոբը հաստատ չի վերցնի, ես չե՛ աստված էլ իջնի երկնքից: Պետք ա ուրիշ բան մտածել: Թող այստեղ, դու գնա տուն: Ես կփորձեմ մի ելք գտնել:

Երկու օր անց, աշխատանքից տուն գալով Հունանը զանգեց ու Արուսին կանչեց:

- Այ մեր, էս երկու օր ա՛ մտքերի մեջ եմ, հազար ու մի բան եմ մտածել: Էդ գումարի պահով Սերոբը չպետք ա տուժի: Արհեստավոր մարդ ա, առավոտից իրիկուն քար ա տաշում, պատ ա շարում, իր հալալ քրտինքով ա փող վաստակում, կինն էլ եկած օրից աշխատանքի մեջ ա: Խնայում են, տնտեսում են, քեզ էլ են լավ պահում, երեխեքին էլ: Հակոբը չի կարող այդ գումարը վերցնել, չնայած ի՛ր գումարն ա կորել: Հակոբն իրավաբան ա, լավ գործի մեջ ա, երկու տարվա մեջ հասցրել ա հազար ռուբլի տնտեսել, դեռ առաջ կգնա, բնակարան էլ կունենա, ավտոմեքենա էլ, ամեն ինչ: Խնդիրը Սերոբն ա, նա էս գումարը պետք ա ետ վերցնի ու նորից դնի բանկում: Ես, դու և Հակոբը ստիպված մի սուտ պետք ա հորինենք, ուրիշ տարբերակ չկա:

- Մեղա աստված, Հունան ջան, ի՞նչ սուտ, էտ ի՞նչ ա անցել մտքովդ:

- Երեկ գիշեր ձյուն եկավ ու նստեց, եղանակն էլ լավ ցրտել ա: Էսօր գնացել եմ մեր խորդանոցի պահարանից վերցրել եմ պապայի բաճկոնը, հագել ու գրպանում գտել եմ ութ հարյուր ռուբլին: Իսկ էդ բաճկոնը անցած ամիս դու բերեցիր ձեր տանից: Ասացիր. հերդ երեք տարի ա՛ չկա, էս բաճկոնը իբր ինչի համար եմ պահել տան պահարանում: Ցրտերն ընկնի՛

կհագնես գործ-մործ անելիս: Էս ամենի մեջ սուտը մենակ էն ա, որ իբր էդ գումարը պապայի բաճկոնի գրպանում ես պահած եղել, ոչ թե քո շորերի տակ, իբր շփոթել ես, լավ չես հիշել, մեկ էլ էն, որ էդ բաճկոնը ոչ թե էսօր եմ բերել խորդանոցից, այլ մի շաբաթ առաջ, բայց իբրն էսօր եմ հագել ու գրպանում գտել գումարը: Մնացած ամեն ինչը ճիշտ ա: Հրեն, բաճկոնը արհեստանոցի պատից կախել եմ: Ես տանը մի էդքան գումար ունեմ. կղնեմ սեղանին քո բերած գումարի կողքին, թող Սերոբը գա տեսնի: Հաստատ կհավատա ու խիղճը հանգիստ իր գումարը կվերցնի: Հակոբն էլ ցույց կտա, որ իր գումարն, ուրեմն, չի կորել: Հիմա զանգեմ Սերոբին էլ, Հակոբին էլ՝ թող զան ու էս թեման փակենք: Հակոբին նախապես կասեմ, որ այս ամենը խաղ ա:

Արուսը լուռ էր, նա կարծես չէր հավատում, որ ամեն ինչ հենց Հունանի ասածով կլինի, բայց այլ ասելիք էլ չուներ: Այս ամենի մեջ նա իրեն, միայն իրեն էր մեղավոր համարում:

Առաջինը Սերոբը եկավ. տունը մոտ էր: Հունանը արհեստանոցում մի քիչ ոտքը կախ գցեց, իբր գործիքներն է հավաքում, բայց նա ուզում էր, որ Սերոբը տեսնի պատից կախված բաճկոնը: Եվ Սերոբը ոչ միայն տեսավ, այլև արձագանքեց.

- Պապայի բաճկոնի եղանակներն սկսվեցին, քո հագով էլ լավ կլինի:
- Հա, ես պապայի չափսերն եմ ժառանգել: Դո՛ւ լավ բոյ քաշեցիր՝ իսկական Դանել քեռու նման:

Եկավ նաև Հակոբը և միասին բարձրացան տուն: Սերոբը լարված էր և պատրաստվում էր դիմադրել, ենթադրելով, որ հիմա մեծ և փոքր եղբայրները իրեն պետք է ստիպեն գումարը ետ վերցնել: Բայց Հունանը դարակից բերեց ու սեղանին դրեց երկու տրցակ թղթադրամ.

- Սրանցից յուրաքանչյուրն ութ հարյուր ռուբլի ա. մեկը՝ մաման ա երկու օր առաջ բերել, մյուսը ես եմ էսօր պապայի բաճկոնի գրպանից գտել, իսկ այդ բաճկոնը անցած ամիս մաման ա բերել ու ես էլ, առանց գրպանները նայելու՝ դրել էի խորդանոցի պահարանում: Էսօր ցուրտ էր, գնացի, բերեցի, հագա ու գրպանում այս գումարն էր: Ահագին ուրախացա, դուք էլ ուրախացեք, թեման փակվեց: Հիմա սուրճ եփեմ ու հարազատներով սուրճ խմենք:

Սերոբի համար անսպասելի անակնկալ էր: Կարծես մի մեծ ծանրություն վրայից ընկավ:

- Այ մեր, բա ասում էիր վերին դարակում քո շորերի տակ ես դրած եղել,- թղթադրամների տրցակներից մեկը գրպանը դնելով՝ Սերոբը մտերմաբար գրկեց Արուսի ուսը,- դու էլ էիր շատ մտածում, էս քանի օրա՝ տեղդ չէիր գտնում:

- Երևի սկզբում մտածել եմ՝ դնեմ շորերիս տակ, հետո, չգիտեմ ինչու՝ դրել եմ հորդ բաճկոնի գրպանը: Եսիմ, մեծ կին եմ, խելքս գնալ-գալովի ա,- մի կերպ մրմնջաց Արուսը: Աչքերը արցունքոտվեցին. ամուսնու՞ն հիշեց,

սու՞տը հոգուն ցավ պատճառեց, թե՞ որդիների համերաշխության վրա կախված վտանգը ճնշեց...

Հետո սուրճ խմեցին, մի կես ժամի չափ խոսեցին դեսից-դենից ու ոտքի ելան.

- Գնանք, արդեն ուշ ա:

Երբ մի քանի մետր էր մնում, որ բակից դուրս գային՝ հանկարծ Սերոբը ետ դարձավ՝ ասելով.

- Մի բռպե սպասե՛ք, հիմա կգամ:

Նա արագաքայլ գնում էր դեպի տան ետնամասը. այնտեղ էր գտնվում խորդանոցը: Գնալն ու ետ դառնալը մեկ եղավ: Մի պահ կանգնեց աստիճանների մոտ, հետո սկսեց դանդաղ բարձրանալ ու կանգնելով շքամուտքի հարթակին՝ ծափահարեց.

- Կեցցե՛ք, լավ թատրոն խաղացիք գլխիս, տաղանդավոր դերասաններ եք եղել՝ չեմ իմացել: Երեկ ա ձյունը եկել, նստել, իսկ այսօր դեպի խորդանոց տանող ոչ մի հետք չկա,- ներս գնաց, գումարը գրպանից հանեց ու դրեց սեղանին, դուրս եկավ, իջավ բակ ու նկատելի հեզմանքով բարի գիշեր մաղթելով եղբայրներին՝ շփոթահար Արուսի հետ թևանցուկ հեռացավ:

Հունանն ու Հակոբը նույնպես շփոթահար էին: Մթնում էր արդեն և սկսեց ձյուն տեղալ: Տուն բարձրացան ծանր ու դժվար քայլերով: Հակոբը գրպանից հանեց գումարը, դրեց սեղանին.

- Սա իմը չի...,- ու գլխիկոր հեռացավ: Երբ նա արդեն հեռացել էր բակից՝ Հունանը բռունցքով հարվածեց սեղանին այնպես, որ թղթադրամների մի մասը հատակին թափվեց:

- Ութ հարյուր ռուբլին ոչի՛նչ է, ոչ մեկին պետք չէ՛,- ներսում կուտակված զայրույթը դուրս հորդաց խոպոտ ձայնով,- իսկ ժամանակին ինձ կործանումից փրկելու համար երկու հարյուր ռուբլի էին ուզում ու հայրս չտվեց, ունե՛ր, բայց չտվեց և ինքը, լինելով ավարտական դասարանի միակ գերագանցիկը՝ համալսարանի փոխարեն հայտնվեց բանտում...

Հունանը մի տեսակ թուլություն զգաց, բարձրացավ աթոռից ու պառկեց բազմոցին: Սենյակը արդեն մթնել էր, իսկ լույսն էլ կարծես ավելորդ էր: Նրան պաշարեցին անցյալի դժնդակ հուշերը: Գյուղում հարևանությամբ ապրող քեռու որդին՝ Ռադիկը, մեկ տարով իրենից մեծ էր, գրել-կարդալուց հեռու, երկու անգամ մնացել էր նույն դասարանում և մի կերպ ավարտել ութերորդը: Բայց ամեն տեսակ գործերի մեջ պատրաստակամ էր, կամեցող, օգնող: Չնայած լինելով տարբեր մտավոր կարողությունների տեր՝ կապված էին իրար հետ: Ռադիկը դպրոցում միայն մի առարկայից էր փայլում. աշխատանքի ուսուցումից: Դպրոցի արհեստանոցի փայտամշակման հաստոցները նրա ուրախությունն էին: Հաճախ էր դասերից հետո ուսուցչի՝ Դարբինյանի թույլտվությամբ մնում արհեստանոցում, պատրաստում էր փայտե իրեր՝ գրտնակներ, տարբեր

ձևի ու չափսի սափորներ, թիակներ, շրջանակներ: Ութերորդից դպրոցը թողնելուց հետո էլ գրեթե ամեն օր գնում էր այնտեղ և միջին դասարանների տղաներին հաստոցներով աշխատել էր սովորեցնում: Հունանի համար դպրոցի վերջին գարնանային արձակուրդներն էին սկսվել: Դպրոցը փակ էր, Դարբինյանը՝ Երևանում, արհեստանոցի բանալին՝ Ռադիկի մոտ: Հաստոցներից մեկը գողանալու միտքը գայթակղել էր Ռադիկին, բայց նրան օգնող էր պետք և նրա համար միակ վստահելի մարդը Հունանն էր: Սկզբում հրաժարվեց, բայց հետո տեղի տվեց Ռադիկի թախանձանքներին: Երկու օրից Դարբինյանը գալու էր և Ռադիկը բանալին վերադարձնելու էր նրան: Ըստ Ռադիկի՝ Դարբինյանը արձակուրդի օրերը սպառվելուց հետո կգնար դպրոց և միայն այդ ժամանակ կիմանար հաստոցի կորուստը: Ինքը հուսալի տեղում կթաքցնի այն ու հետագայում կասի, որ Երևանի շուկայից է գնել, կտեղադրի իրենց նկուղում ու կզբաղվի իր սիրած գործով՝ փայտից կպատրաստի ինչ ուզի... «Դարբինյանն ասում էր, որ այդ հաստոցները արդեն հնացել են, հեսա մայիսին դուրս են գրելու ու նորերն են ստանալու, ավելի լավերը: Այնպես որ, այդ հաստոցը դպրոցին ըսկի պետք էլ չի»,- հավատացրեց երդվելով. «Հորս արև»: Այդ չարաբաստիկ գողությունը շատ արագ բացահայտվեց և Հունանն ու Ռադիկը կալանավորվեցին: Գյուղը ավելոծվեց. տուն չկար, որ չդատապարտեր կատարվածը, անիծում էին Ռադիկին, ավստսում էին Հունանին: Խայտառակության ծանրության տակ նվաղել էին Հունանի ծնողները: Պատվախղիբ հայրը հայտարարել էր. «Ես Հունան անունով որդի չունեմ այլևս, նա մեռած է ու թաղված»: Գյուղամեջ դուրս չէր գալիս: Եվ երբ դատավորին մոտիկ մեկը առաջարկում է երկու հարյուր ռուբլի կաշառքով որդուն դատվելուց ազատել՝ հայրը պոռթկում է. «Թող գնա՛, թող գնա՛ նստի, որ կյանքում էլ նման դալաթ չանի: Իմ խայտառակված պատիվը քանի՞ ռուբլով պիտի մաքրվի»: Դպրոցի տնօրենին խիստ նկատողություն էին տվել, Դարբինյանին ազատել էին աշխատանքից: Ռադիկին երեք տարով, Հունանին էլ մեկ տարով ազատագրկման դատապարտեցին: Գողության պահին եղել էր անչափահաս, իսկ դատվելիս արդեն լրացել էր տասնութ տարին ու նա հայտնվեց չափահասների գաղութում: Կոտրված էր, հուսալքված, դառնացած՝ ինքն իր դեմ. անմտորեն կյանքի հատակը գլորվելու համար, հոր դեմ. դժբախտության մեջ հայտնված որդուն դաժանորեն լքելու համար: Ինչ եղել էր: Այդ երկու հարյուր ռուբլով թող որդուն դատվելուց ազատեր ու հետո թող տանից վռնդեր: Կթողներ, գյուղից կհեռանար, կգնար կայարաններում բեռնակիր կդառնար, բայց այդ անիծյալ գաղութում չէր հայտնվի: Հետո ավելի մեծ դժբախտությունը արդեն իր կամքից անկախ եկավ: Ազատ արձակվելուն մեկ ամիս էր մնում, երբ մի օր գաղութի բակում տեսավ, թե ինչպես են երեք կալանավորներ դաժանորեն ծեծում

փոքրամարմին մեկին: Ինքը չկարողացավ անտարբեր նայել, միջամտեց, քաշքշուկ առաջացավ, հսկիչները վրա հասան ու նրանցից մեկը մարմնական վնասվածք ստացավ: Գործ հարուցվեց, մյուսների հետ կրկին դատվեց, այս անգամ պատժաչափին ավելացվեց հինգ տարի, որը ամբողջովին կրեց արդեն Հայաստանից դուրս այլ կալանավայրում: Այստեղ մի խումբ կալանավորների հետ աշխատում էր ավտովերանորոգման խոշոր արհեստանոցում: Սերոբի հետ նամակագրություն ուներ: Իր երկրորդ անգամ դատվելու և այլ կալանավայր տեղափոխվելու մասին ստեց՝ գրելով, որ չի ուզում գյուղ վերադառնալ, որոշել է գնալ Ռուսաստան, մի քանի տարի մնալ, աշխատել: Սերոբը գրում էր, որ հայրը վաճառել է գյուղի տունը, շրջկենտրոնի ծայրամասում տուն գնել, տեղափոխվել ու այնտեղ են ապրում: Տան մոտակայքում մի տուն էլ կա, որ վաճառվում է: Հայրը գյուղից բերած խնայողություններով ուզում է այդ տունը գնել Հունանի համար: Հայրն ու մայրը աշխատանք են գտել, աշխատում են, ինքն ու Հակոբը սեպտեմբերի մեկից արդեն սովորում են շրջկենտրոնի դպրոցում: Սերոբը մանրամասն գրում էր, որ հայրը շատ է զոջում կատարվածի համար, միշտ տխուր է, սպասում է, օրերն է հաշվում, հաճախ է հիվանդանում: Մեկ այլ նամակով Սերոբը հայտնում էր, որ հայրը արդեն Հունանի համար տունը գնել է: Եվ մի օր Սերոբից ստացված ծրարի մեջ նաև հոր նամակն էր. հազիվ կես էջ, ծուռ ու մուռ տառերով, դժվար ընթերցվող. որը կարդում, կարդում էր ու չէր վերջացնում. արցունքները մշուշում էին աչքերը... Ջգում էր հոր զոջումը, տառապանքը, կարոտը. «...վերադարձիր, Հունան ջան, էնպես չլինի՝ մեռնեմ առանց քեզ տեսնելու, մերդ էլ ա աչքը ճամփիդ, դու մեր առաջին որդին ես, թանկ ես: Արի, ուսումդ կշարունակես: Գյուղի դպրոցից թղթերդ բերել եմ, էստեղի դպրոցի դիրեկտորը ասում ա, որ երեկոյանի ավարտական կտա: Անպայման արի»: Վերադարձավ: Աշխատանքի տեղավորվեց ու մեկ տարի լարված պարապեց համալսարանի ընդունելության քննություններին մասնակցելու համար, կրկնեց, վերհիշեց՝ մոռացածը: Դպրոցի տնօրենը երեկոյան դպրոցի ավարտականը տվեց՝ գյուղի դպրոցից բերված գերազանց գնահատականներով: Մի նոր հիասթափություն. համալսարանում փաստաթղթերն ընդունող հանձնաժողովի առաջարկած դիմումի ձևի այլևայլ տեղեկությունների լրացման մեջ հարց կար դատվածության մասին: Ինքը կանգ առավ, մի պահ տատանվեց ու գրեց. «Այո»: Փաստաթղթերը ետ վերադարձրին ու ինքը դառնացած տուն եկավ: «Ա՛խ, տեր աստված, իմ այս կարճ կյանքի ընթացքում ինչերի՛ միջով եմ անցել...», - տնքաց ու բազմոցից վեր կացավ, լույսը վառեց ու նայեց ժամացույցին. կես գիշերն անց էր: Ինքն իր վրա սկսեց զայրանալ. ախր որոշել է երբեք անցյալի մասին չհիշել, չէ որ իր

ներկան ամեն ինչով լավ է՝ տուն ու տեղ, լավ ընտանիք, կայուն աշխատանք, կողքից էլ ավտովերանորոգման պատվերներ: Էլ ինչու՞ է վերադառնում անցյալ, ախ հա՛, այդ չարաբաստիկ փողերը..., այս ութ հարյուր ռուբլին, այն երկու հարյուր ռուբլին...

Հետո Հունանը սկսեց հատակին ցրված թղթադրամները հավաքել մի տհաճությամբ, կարծես լարծուն ու զզվելի միջատներ էր հավաքում աղբամանը նետելու համար: Եվ հավաքելու ընթացքում էլ որոշեց, որ հենց ինքը կտանի ու բանկում իր ունեցած ավանդի վրա կդնի. մինչև հիմա Սերոբի անունով է եղել, թող հիմա էլ իր անունով լինի: Հետոն ժամանակը ցույց կտա:

Հակոբի համար այդ գիշերը դժվար լուսացավ: Գիտեր, համոզված էր, որ Հունանի ու Սերոբի համար էլ գիշերը դժվար է լուսացել, որ յուրաքանչյուրի համար էլ ստեղծված վիճակից ելքի փնտրտուքի ժամեր են սահել: Բայց այդ ելքը կարծես թե չկա, որևէ ձևով չի նշմարվում: Ոչ այդ գումարի գոյությունն էր էական, ոչ էլ՝ դրա կորուստը: Ավելի կարևոր, ավելի էական ու թանկ բան էր արժեզրկվում. եղբայրների միջև ի սկզբանե գոյություն ունեցող անկեղծության լույսը՝ միշտ պայծառ ու ջերմ, ազնիվ, անշահախնդիր: Ինքը ի՞նչ անի, ինչպե՞ս վարվի, ինչպե՞ս փրկի այդ լույսը...: Այս ծանր ու կպչուն մտքերի բեռով ու տանջող գլխացավի ուղեկցությամբ գնաց աշխատանքի: Աշխատասենյակում բավականին ցուրտ էր ու նա բաձկոնով նստեց գրասեղանի դիմաց, փորձեց կենտրոնանալ օրվա առաջնահերթ անելիքների վրա, մոտ բերեց ընթացք պահանջող թղթերի դարսը, սակայն դրանք այնքան ճղճիմ ու ձանձրալի թվացին, որ զայրուրով ետ հրեց:

Քիչ անց դուռը բացեց գործավարը.

- Բարի լույս, Հակոբ, Երվարդիչն ասաց՝ իր մոտ մտնես,- հետո մտերմիկ տոնով հարցրեց,- ինչու՞ ես մի տեսակ:

- Գլխացավ ունեմ,- պատասխանեց ու բաձկոնը աթոռի թիկնակին դնելով՝ գնաց Երվանդիչի մոտ:

- Ավտոմեքենաների գողության գործից առանձնացնում եմ ավտոմասերը վաճառած տղային՝ Սամվել Մուշեղյանին վերաբերող մասը, իսկ հիմնական մեղավորների՝ Վաչիկի և Վահրամի մասով գործը ետ եմ վերադարձնում լրացուցիչ քննության,- ասաց Երվանդիչն ու մտահոգ թերթելով իր առջև դարսված թղթապանակները՝ շարունակեց,- այս երկուսի կողմից ավելի վաղ կատարված գողություններով կան էական ծանրացուցիչ հանգամանքներ, որոնց վրա քննիչը այք է փակել: Իսկ Սամվելը ոչ մեքենաների գողությանն է մասնակցել, ոչ էլ մասնատմանը: Նրա մեղքը միայն վերջին ավտոմեքենայից

առանձնացված մասերը վաճառելու մեջ է: Այսինքն, նա հանցակից է, բայց ոչ մյուս երկուսի հետ հավասարապես, ինչպես որ որակվել է: Ափսոս է տղան, ինսիտուտից կհեռացնեն, բայց գոնե չընկնի գաղութ, այնտեղ կկործանվի: Ըստ գործի նյութերի՝ նրան կարելի է պայմանական տալ: Դու հիմա սկսիր կազմել իմ որոշման տեքստը, նշիր էական նշանակություն ունեցող հիմքերը, համապատասխան հղումները և այլն, դե, դու լավ գիտես այդ ամենը: Եվ մի բան էլ...

Թղթապանակները Հակոբին հանձնելուց հետո Երվանդիչը բացեց աջ կողմի դարակը և այնտեղից հանեց մի ծրար.

-Այս ծրարի մեջ հինգ հարյուր ռուբլի է. Սամվելի հայրն է ծանոթի միջոցով ուղարկել: Կկանչես և անձամբ կվերադարձնես իրեն: Սա այն դեպքը չէ, որ ես գումար վերցնեմ. դժվար ապրող մարդիկ են: Տղան մոլորվել, սայթաքել է, բարձրագույն կրթություն ստանալուց էլ կգրկվի: Դա արդեն մեծ պատիժ է նրա համար: Իսկ մյուս երկուսից և՛ փող կվերցնեմ, և՛ կդատեմ այդ սրիկաներին ու չեմ էլ ափսոսա:

Հակոբն անակնկալի եկավ: Մի պահ տատանվում էր, բայց թղթապանակների հետ վերցրեց նաև ծրարը և դուրս եկավ: Իր աշխատասենյակում փորձում էր մտքերն ի մի բերել: Գործավարը սուրճ բերեց. «Խմի՛ր, գլխացավդ կանցնի», ու հեռացավ: Գլխացավը կարծես մեղմացել էր, բայց սուրճը ամեն դեպքում տեղին էր: Իսկ ներսում վեր ու վար էին անում անորոշ հարցերը. ծրարի գումարը դատավորը կարող էր ետ վերադարձնել այն բերողի միջոցով, բայց իրեն հանձնարարեց: Ինչու՞... Արդյո՞ք դա քայլ էր միմյանց հետ արդեն բաց աշխատելու համար, փորձում է իրեն տեսնել՝ միջնորդի դերում: Վստահությունը իր նկատմամբ այս դեպքում ոչ միայն հաճելի է, ոչ միայն՝ պարտավորոցնող, այլ նաև՝ վտանգավոր: Ի՞նչ իմանա... Երկու տարվա ընթացքում, ինչ աշխատում է որպես դատավորի օգնական՝ փողային հարցերով իրենց միջև թեմա չի եղել: Բայց առանձին դեպքերում ակնարկների, տեղ-տեղ էլ կատակների միջոցով Երվանդիչն իրեն հատուկ անմիջականությամբ չի թաքցրել, որ դատավորի պաշտոնը, ինչպես նաև ցանկացած այլ պաշտոն իր գինն ունի և այդ գինը միանվագ լինելուց հետո նաև շարունակական է լինում:

Հակոբը առաջին թղթապանակի մեջ գտավ Սամվելի տան հեռախոսահամարը, զանգեց: Հենց նրա հայրն էլ վերցրեց լսափողը և կես ժամից նա արդեն նստած էր իր դիմաց: Բարձրահասակ, նիհար տղամարդ էր Սահակը, անհանգիստ շարժումներով: Ընկճված տեսքը մատնում էր ներքին տառապանքի մասին: Լարված էր. ի՞նչ է սպասում իր զավակին... Լսելով Հակոբի բացատրությունը Սամվելի վերաբերյալ դատավորի որոշման մասին՝ նա կորցրեց սառնասրտությունը, հուզվեց և փղձկաց, իսկ երբ Հակոբը նրան մեկնեց ծրարը՝ շփոթվեց ու այլայլվեց.

- Բա ասում ես, որ դատավորը բաց կթողնի Սամվելիս, ուրեմն սխալ հասկացա, բաց չի չողնի՞, կնստացնի՞,- մրմնջաց հուսահատ:

Հակոբը ստիպված էր նորից կրկնել ասվածը: Այս անգամ ավելացրեց, որ դատավորը առանց որևէ գումարի է նման որոշում կայացնում, մարդկայնորեն գնահատելով իրավիճակը, Սամվելի արարքը չի հավասարեցվում մեքենաների գողերի հանցագործությանը: Հետո խնդրեց, որ այս խոսակցությունը պետք է գաղտնի մնա հենց Սամվելի շահերից ելնելով: Սահակը ոտքի կանգնեց, ուզում էր անձամբ մտնել դատավորի մոտ, հայտնել իր երախտիքը, բայց նա տեղում չէր: Հետո մեկնեց գրկեց իրեն ուղեկցելու համար ոտքի կանգնած Հակոբին, հուզմունքը մեկ անգամ էլ ավիքվեց նրա դեմքին, հաջորդ պահին կտրուկ շրջվեց դեպի դուռն ու մի քանի քայլ չարած՝ ետ եկավ, գրպանից հանեց ծրարը և միջից հանելով մեկ տաս ուրբիանոց թղթադրամ՝ մեկնեց Հակոբին.

-Սա քեզ, Հակոբ ջան, էս լավ լուրի համար, ես հո անշնորհք մարդ չեմ, որ չհասկանամ:

Հակոբը չէր սպասում նման վերջաբանի: Հրաժարվեց. «Կարիք չկա, պետք չի...», սակայն Սահակը թղթադրամը խոթեց սեղանի վրա գտնվող հաշվիչի տակ ու արագ հեռացավ՝ կրկնելով. «Գոհ եմ, շա՛տ գոհ եմ»: Սահակի գնալուց հետո Հակոբը դառնորեն մտածեց, որ եթե Հունանին դատող դատավորի մեջ էլ մի քիչ խիղճ լիներ, մի քիչ Երվանդիչի պես սրտացավություն ունենար՝ Հունանը չէր գնա գաղութ, այնտեղ էլ փորձանքի մեջ չէր ընկնի... Օ՛, ընտանիքով ինչ սրտամաշ տարիներ ապրեցին...

Ընդմիջումից հետո ներս մտան երկու տղամարդ: Հորեղբոր որդիներ էին իրենց գյուղից: Նախորդ օրերին նրանք եղել էին Հակոբի մոտ, ժառանգության խճճված հարցերով հայցադիմումներ ունեին, փոխադարձ մեղադրանքներով վիճում էին՝ յուրաքանչյուրը յուրովի հիմնավորելով իր պահանջը: Հակոբը բացատրել էր օրենքի դրույթները վեճի առարկայի ու հանգամանքների մասին, համոզել էր կնքել հաշտության համաձայնագիր: Գնացել, մի երկու օր մտածել էին, հիմա եկել ու ասում էին.

- Հակոբ ջան, ախր մենք ո՛ր, եղ հաշտվելու գիր գրելն՝ ո՛ր: Գյուղացի, այգեգործ մարդիկ ենք: Արի՛ մեզ օգնի, դու գրի, կարդա՛ լսենք, ստորագրենք, տանք: Գիտենք, դու պարտավոր չես: Քո նեղությունն էլ մեր աչքի վրա, կգնահատենք՝ դժգոհ չես մնա:

Հաշտության համաձայնագիրը գրվեց, ընթերցվեց, ստորագրվեց: Գնահատեցին՝ շրջանցելով Հակոբի թույլ դիմադրությունը (յուրաքանչյուրը՝ տասական ուրբի), հաշտված ու խաղաղված գնացին: Թե Սահակի և թե վերջիններիս կողմից կամովին-ինքնաբուխ դրված գումարները ըստ Հակոբի՝ «ջրի բերած» էին:

Դատարանի առօրյա անց ու դարձն այնպես էին կլանել Հակոբի ուշադրությունը, որ նա միայն տուն գնալու ճանապարհին հիշեց երեկվա

-13-

տհաճ միջադեպը Սերոբի ու Հունանի հետ: Գիշերվա ու լուսադեմի տանջող հոգեվիճակը հեռացել էր, մշուշվել, կարծես ոչ թե երեկ էր եղել, այլ ավելի վաղ: Բայց զգում էր նրա դարանակալ ընթացքը, այն հետևում էր իրեն, մոտենում, ավելի մոտենում...: Ինքը պետք է մտածի, մի բան որոշի, մի ձև գտնի Սերոբի գումարը վերադարձնելու համար: Ի՞նչ, ի՞նչ կարող է անել...

- Բարի օր, Հակոբ,- լսեց փողոցի հանդիպակաց մայթից:

Ասոն էր, դասընկերը, հիմա արդեն շրջկոմի հրահանգիչ Ասատուր Ալեքյանը: Կանգնեց: Ասոն արագ փողոցն անցավ, մոտեցավ, ձեռքով մտերմիկ բարևեցին, քայլեցին առաջ՝ խոսելով դեսից-դենից ու մեկ էլ Ասոն կանգ առավ.

- Շրջկոմում դիմումդ մնաց սպասողական, չես գնում, չես գալիս, չես հետաքրքրվում:

- Ի՞նչ գնամ-գամ, ասել են՝ կկանչենք:

- Լուսնի վրայից չես իջել, դու էլ գիտես, որ ծառայողներին պարտիայի մեջ ընդունելու լիմիտը շատ սահմանափակ է: Բարձրագույն կրթությամբ կադրերի առաջխաղացումը, գիտես, պարտիական տոմսով է լինում: Դու ամբողջ կյանքում հո չես մնալու դատավորի օգնական:

- Հա, հասկանում եմ: Ասել են՝ գնա պարտիայի կանոնադրությունն ու ծրագիրը կարդա, կկանչենք հարցազրույցի: Ես էլ կարդացել եմ, էլ ի՞նչ անեմ:

- Լսի՛, Հակոբ, ախպերավարի ասեմ՝ իմացիր: Ծառայողների համար եղ տոմսը գին ունի, վերևից ա էդպես: Պաշտոն ստանալուց հետո եղ գինը բոլորն էլ հանում են ու դեռ՝ շահույթով:

- Ես շտապելու բան չունեմ, մեկ ա՝ մի օր պետք ա կանչեն՝ չե՞:

- Չէ, կարող ա՝ չկանչեն:

- Բա ի՞նչ պիտի պատասխանեն դիմումիս:

- Կմերժեն:

- Պատճառը՞ ...

- Մի բան կգտնեն, էլի...

- Պատճառ չկա, որտեղի՞ց կգտնեն:

- Կասեն՝ ախպերդ դատված ա եղել:

Հակոբը կտրուկ կանգ առավ, այլայլվեց:

- Կներես, Հակոբ ջան, չէի ուզում..., բայց...

խնայված գումարից ութ հարյուր ռուբլին վերցնելու և Հակոբին առաջարկելու փաստի հետ: Ի վերջո Հակոբն օտար մեկը չէ՝ իր կրտսեր եղբայրն է: Չնայած նա չընդունեց գումարը և, հայտնի չէ, թե հետո ի՞նչ կլինի: Մերոքը ոչ թե կասկածում էր, այլ համոզված էր, որ գումարի անհայտանալը Անուշի ձեռքով է կատարվել և կատարվել է ոչ թե շահադիտական մղումով, այլ՝ թյուրիմացաբար, հապճեպ. ենթադրում էր, ո՛չ, հաստատապես գիտեր, որ Անուշը մի օր պատահամաբ տեսել է այդ գումարը, տեսել է սկեսրոջ շորերի դարակում, շորերի դարսի տակ ու եզրակացրել, որ սկեսուրը, ուրեմն, իրենից ու Մերոքից գաղտնի գումար ունի: Դա խորապես ցնցել, վիրավորել ու խոցել է Անուշին և նա անմիջապես որոշել է ոչ թե բացատրություն պահանջել սկեսրոջից, որը կարող էր ընտանեկան անախորժության տեղիք տալ, այլ գումարը տանից դուրս տանել: Այդպես էին մտածում նաև Հունանը, Հակոբը, Արուսը: Եվ բոլորն էլ այդ մասին լուր էին, սպասելով, որ Անուշը, արդեն իմանալով ճշմարտությունը, ինչ քայլ կանի: Անուշը թանկ էր բոլորի համար. Արուսը նրան սիրում էր հարազատ աղջկա պես, Հունանի ու Հակոբի համար խելացի ու նվիրական քույր էր: Գումարի մասին Անուշին հարցեր տալն անպատեհ էին համարում, նույնիսկ խուսափում էին միմյանց հետ այդ թեման քննարկելուց: Եթե Անուշն ասելիք ունի՝ ինքը կասի: Եթե այդ գումարը չի ծախսվել՝ Անուշը ետ կբերի, թե ինչպես կբացատրի՝ դժվար է կռահելը, իսկ եթե արդեն ծախսված է՞, հնարավոր չէ ետ բերել՝...: Ինչ եղել էր՞ է...: Սակայն Մերոքին տանջում էր մեկ այլ բան. ինչպե՞ս կարող էր Անուշն իրենից գաղտնիք ունենալ: Դա նոր, անծանոթ, անհավանական իրողություն էր: Համատեղ ապրած տասնմեկ տարիների ընթացքում, նույնիսկ ամուսնությունից էլ առաջ, նրանք եղել են բաց ու անկեղծ, կիսվել են անզամ մանր-մունր հարցերով: Ի՞նչը կարող էր Անուշին ստիպել իրենից գաղտնի պահել այդ գումարը գտնելու դեպքը: Արդյո՞ք միայն գումարի մասին է լռել, թե էլի ինչ-ինչ հարցեր են եղել կամ՝ այդպիսիք կան: Այս կասկածների քառսում մի անորոշ տագնապ էր ներս սողոսկում. մի՞ թե կարող են իրենք օտարանալ միմյանցից, խաղալ մի դեր, որը իրենցը չէ: Իսկ իրենք կարծես թե արդեն խաղում են. կարծես տանից գումար չի կորել և կարծես ոչինչ էլ չի եղել. հանգի՛ստ են, խաղա՛ղ...: Բայց ախր եղել է, եղել է, եղել է... Միայն փողի կորստի բացահայտման օրը, այդ գիշերը և հաջորդ օրը Անուշը այլայլված էր, անտրամադիր, ցրված, նույնիսկ աշխատանքի չգնաց: Այդ օրը, հենց այդ օրը գոնե Անուշը խոսեր... Ի՞նչը նրան ետ պահեց, պահն էր ու բաց թողեց: Հետո արդեն, հավանաբար, չի կարող խոսել, գուցե երբեք էլ չխոսի: Ուրեմն՝ պետք է խաղան այս պարտադրված խաղը. ոչինչ էլ չի՛ եղել, հանգի՛ստ են, խաղա՛ղ: Մինչև ե՞րբ...

Օրերն անցնում էին ձմեռնամուտի սառն ու անարև պտույտներով: Դեկտեմբերի տասին հայրիկի մահվան տարելիցի առիթով գերեզմանոց գնացին, վերադարձան ու հացի նստեցին: Երրորդ տարին էր, որ տարվա մեջ այդ օրը եղբայրները ընտանիքներով հավաքվում էին Սերոբի տանը: Արուսն ու Անուշը հոգ էին տարել, որ սեղանը առատ լինի՝ ի գնահատումն տան հանգուցյալ գլխավորի նկատմամբ հարգանքի ու հիշատակի: Ամեն ինչ սովորականի պես էր, միայն թե անորոշ, անձանոթ, սառն ու օտար մի զգացողություն իր ներկայությունն էր պարտադրում և եղբայրներին, և Արուսին ու Անուշին՝ ստիպելով խուսափել միմյանց աչքերի մեջ ուղիղ նայելուց: Այդպես եղավ նաև Բաբիկի տասնամյակը նշելու օրը, այդպես էր նոր տարվա առիթով շնորհավորանքների համար միմյանց այցելելու օրերին: Հետո կարծես քիչ-քիչ ընտելացան կամ հարմարվեցին այդ վիճակին: Ութ հարյուր ռուբլու պատմությունը կույ էկավ յուրաքանչյուրի հիշողության մի մութ անկյունում ու լռեց, լռեց՝ ձայնն ու խոսելու ընդունակությունը կորցրած հիվանդի պես. մեկ-մեկ տնքում էր, շուտ ու մուտ էր գալիս, հիշեցնում իր մասին ու դարձյալ լռում...: Այն գրեթե դադարեց գոյություն ունենալ հաջորդ տարվա մարտից: Տեղի ունեցող ու շարունակվող արցախյան իրադարձությունների, ցույցերի ու գործադուլների լուրերը, դրանց ամենօրյա քննարկումներն ու մեկնաբանությունները, զայրութն ու հիասթափությունը ամբողջովին պաշարեցին մարդկանց միտքն ու գիտակցությունը: Տարեվերջին էլ՝ Սպիտակի աղետալի երկրաշարժի բերած ողբերգության մղձավանջը...: Անձնական, ընտանեկան հարցերն ու խնդիրները դարձան երկրորդական, երրորդական, դարձան էժան ու անկարևոր: Եվ միայն երկու տարի անց՝ 1990 թվականի գարնանը, երկու տարբեր և միմյանցից անկախ դիպվածներ Հունանին ու Հակոբին բերեցին դեմհանդիման. ութ հարյուր ռուբլին վերակենդանացավ ու դավադիր քրքիջով ցվեց նրանց միջև...

Այդ տարիներին ՄՍՀՄ-ում տնտեսական ճգնաժամ էր, որի մասին պետական մակարդակով բացահայտ չէր խոսվում ու չէր քննարկվում, միայն ասվում էր, որ դա ժամանակավոր է և շուտով կկարգավորվի: Կուսակցական դռնփակ ժողովներում վերևներից եկած մարդիկ ներկայացնում էին ՄՄԿԿ քաղբյուրոյի գերգաղտնի նամակն առ այն, որ ՄՍՀՄ-ը աֆղան ժողովրդին, իբր եղբայրական սիրով, ռազմատեխնիկական հսկայական աջակցություն է ցուցաբերել, որի հետևանքով է առաջացել ճգնաժամը ու պետք է գիտակցաբար համբերել ու հավատալ պայծառ ապագային, որը չի ուշանա և այլն: Մարդիկ աշխատանք ունեին, հաճախ՝ համատեղելով երկրորդ, երրորդ աշխատանքի հետ, կայուն վարձատրվում էին, բայց խանութներում և՛

տնտեսական, և՛ պարենային ապրանքների պակաս կար, այնպես, որ առաջին անհրաժեշտության մթերքները արդեն բաց էին թողնվում

-16-

կտրոններով՝ ըստ ընտանիքի շնչերի թվի, իսկ տնտեսական ապրանքների խոշոր տեսականու ձեռք բերման համար աշխատանքի վայրերում սկսեցին հերթագրել: Մարդկանց մոտ դրամի կուտակում էր առաջանում: ՄՍՀՄ բանկը 1990 թվականին թողարկեց տաս միլիարդ ռուբլու պետական նպատակային անտոկոս փոխառության պարտատոմսեր, որոնցով երաշխավորվում էր երկու տարվա ընթացքում պարտատոմսերի գնորդներին արտահերթ տրամադրել ավտոմեքենա, ինչպես նաև սառնարան, կարի մեքենա, լվացքի մեքենա և այլ պահանջարկ վայելող տեխնիկա:

Հունանը հասցրել էր ունենալ գրեթե այնքան խնայված գումար, որ կարող էր սեփական ավտոմեքենա գնել: Սեփական ավտոմեքենա ունենալը մանկության ու պատանեկության տարիներից իրեն ուղեկցող երեզանք էր: Հիմնարկում հերթագրվել էր, բայց հայտնի չէր, թե հերթը երբ կհասներ. իրենից առաջ հերթագրվածները շատ էին, իսկ տարվա մեջ մեկ կամ երկու ավտոմեքենայի գնման լիմիտ էր հասկացվում: Հերթը հասնելու դեպքում էլ հազարից - հազար հինգ հարյուր ռուբլի ղեկավարությանը պետք է «մաղարիչ» տալ: («Մաղարիչ» բառը կաշառք բառի մտերմիկ փոխարինողն է): Եվ ահա, առաջարկվում է երկու տարվա ընթացքում ավտոմեքենա ձեռք բերել պետական նպատակային անտոկոս փոխառությամբ: Էլ ոչ մի հերթ կամ «մաղարիչ»: Հունանին գրավեց առաջարկը և նա խնայբանկում ունեցած ողջ գումարի դիմաց ձեռք բերեց փոխառություն:

Ամիսներ անց, մի կիրակի օր, Հակոբը եկավ Հունանի մոտ՝ արհեստանոց: Հունանի ձեռքին շտապ գործ կար և նա Հակոբի հետ զրուցում էր առանց գործից կտրվելու: Զրույցը առօրյա հարցերից հասավ անտոկոս փոխառությունների թեմային: Հունանն ասաց, որ իր ողջ խնայողություններով վերցրել է ավտոմեքենայի գնման պարտատոմս և երկու տարի հետո ավտոմեքենա կունենա:

-Էսքան տարի ուրիշների մեքենաներն են դգում-փչում, մի հատ էլ թող ես ունենամ, ումի՞ց են պակաս:

-Հա, ճիշտ էլ արել ես,- արձագանքեց Հակոբը,- ես էլ հնարավորություն ունենայի՝ ես էլ կուզեի: -Հետո շարունակեց,- երեկ պետապի Անդոն էր գործով եկել մոտս: Ասում էր, որ մինչև տասնվեց տարեկան երեխաների անուններով բանկերում նոր տեսակի՝ տասը տարվա ժամկետով կրկնակի բարձր տոկոսով ավանդներ են ընդունում: Հաշիվ բացելու համար սկզբում ներդրվում է երկու հարյուր ռուբլուց ոչ պակաս գումար: Դրա վրա ավելանում է տարեկան չորս տոկոս, իսկ բանկային խնայողական ավանդները, գիտես, տարեկան աճում են երկու

տոկոսով: Այնպես որ՝ երեխաների անունով ավանդը ավելի շահավետ է: Տասնվեց տարեկան դառնալուց և ավանդի ներդրման տասը տարին

-17-

լրանալուց հետո երեխան արդեն ահագին գումար կունենա: Գիտե՞ս, Հունան, արդեն երեք տարի է՝ ինձ հանգիստ չի տալիս Սերոբի էն ութ հարյուր ռուբլին: Մտածում եմ, տանեմ իր երկու երեխաների անուններով բանկի գրքույկ բացեմ. հավասարապես՝ յուրաքանչյուրին չորս հարյուր ռուբլի գումարով: Էդպես խիղճս հանգիստ կլինի:

- Հա, կարելի ա...,- մի տեսակ անորոշ արձագանքեց Հունանն ու շրջվեց կիսատ թողած գործին:

- Հիմա եկել եմ ութ հարյուր ռուբլին վերցնեմ, տանեմ...

- Բայց դու տարել ես,- մի պահ լռելուց հետո, առանց Հակոբի կողմը նայելու, ասաց Հունանը:

Հակոբը շփոթվեց.

- Ե՞րբ..., ո՞նց թե...

- Էն նույն օրը, որ Սերոբը գումարը թողեց սեղանին ու գնաց,- գլխահակ մրմնջաց Հունանը՝ շարունակելով ձեռքի աշխատանքը:

- Հա, բայց ես չվերցրեցի,- ավելի շփոթվեց Հակոբը:

- Վերցրեցիր, ուղղակի չես հիշում: Է՛, ախպերս, երևում ա՛ փողերդ շատ են, խառնել ես: Էն որ մամային ասել էիր, է՛. «Ջրի բերած՝ ջրի տարած»: Երևի չես հիշում...

Հակոբի համար անակնկալ էր ու անհավատալի, որ Հունանը կարող էր նման բան ասել: Նա լսածին չէր հավատում: Մի պահ հույսով սպասեց, որ Հունանը կասի. «Կատակ եմ անում» ու կծիծաղի: Բայց Հունանը շարունակում էր զբաղված ձևանալ և, կարծես թեման փակելու համար, հարցրեց.

- Ֆարրիկայի պահեստապետի դատը վաղն ա՞:

- Հա,- ցրված պատասխանեց Հակոբը:

- Քանի՞ տարի կտան:

- Ի՞նչ իմանամ:

- Հիմար մարդ ա, էլի: Ասա. ո՞նց ես մեռած մարդուն մոտդ բանվոր ձևակերպում ու ամիսներով նրա անունով աշխատավարձը ստանում: Կասիրին էլ կդատեն, չէ՞:

- Հա, կարող ա պայմանական տան. պատերազմի մասնակից ա:

Հակոբը ոտքի կանգնեց: Նա չէր վիճելու Հունանի հետ, Հունանին հակաճառելը վեր էր իր ուժերից, հակաճառելը նշանակում էր ասել. «Հունան, դու ստախոս ես»: Նա այդ բանը երբեք չի անի.

-Դե, ես գնամ,- ու գլխիկոր հեռացավ:

Ալեկոծված, դառնացած, խառնիխուռն մտքերի բեռով տուն մտավ՝ աշխատելով այդ բեռը կոծկել ներսում. Սոնայի հետ չէր կարող կիսվել: Բարեբախտաբար նա երեխայի հետ տանը չէր: Ներսում կուտակվածը

-18-

սպառնում էր դուրս ժայթքել, գալարվում ու պատեպատ էր զարկվում:

Հունանը, իր հարազատը, իր թանկը կարծես հեռանում էր իրենից, հեռանում էր, օտարանում: Ինչու՞, ինչի՞ համար, փողի՞...: Հակոբը փղձկաց ու մի կարճ հեկեկոց պոկվեց կոկորդից...: Հետո սկսեց խաղաղվել, մտքերի շրջապտույտը դանդաղեց ու կանգ առավ: Իրենց միջև տասնմեկ տարվա տարբերություն կար: Միասին են ապրել ընդամենը վեց տարի: Երբ Հունանը տասներորդ դասարանում դատվեց՝ ինքը ընդամենը վեց տարեկան էր: Ինքը՝ դեռ վաղ մանկական իր խաղերի մեջ, Հունանը՝ իր դասերի, գրքերի ու տետրերի մեջ, իր դասարանցիների շրջապատում: Միբուր էին միմյանց մեծի ու փոքրի անդիմադրելի ձգող սիրով: Եթե օրվա ընթացքում միմյանց չէին տեսնում՝ երեկոյան արդեն կարոտով էին գրկախառնվում: Հետո ինքը տառապանքով էր սպասում Հունանի վերադարձին, սպասում էր ամեն օր, ամեն ժամ: Նրա հետ կատարվածը համարում էր չարաղես փորձանք: Մանկական գունազեղ մտապատկերներով կառուցում էր Հունանի վերադարձի տեսարանը, իրենց հանդիպումը: Իսկ այդ հանդիպումը ձգվեց երկար տարիներ. վեց ու կես տարի: Վերադարձից հետո անմիջապես տեղավորվեց աշխատանքի, աշխատանքից հետո մինչև ուշ գիշեր պարապում էր իրավաբանական ընդունվելու համար: Բայց դատվածություն ունենալու պատճառով փաստաթղթերը չընդունեցին: Դրանից հետո նա Սերոբի ու հայրիկի հետ զբաղվեց իր տան վերանորոգմամբ, ամուսնացավ ու սկսեց առանձին ապրել: Կողքին, թե՛ հեռու. Հունանը իր համար ավելին էր, քան հայրիկը կամ Սերոբը: Իսկ ինքը ո՞վ է եղել Հունանի համար. փոքր տարիքում սիրելի խաղալիք, իսկ հետո՝ իր տան գործերում օգնակա՞ն, իսկ հիմա՞...: Մի՞թե Հունանը նախանձում է իրեն՝ կրթություն ստանալու և հարմար աշխատանք ունենալու համար: Իր ուսանողական տարիներին գրեթե ամեն ամիս Հունանը գալիս էր Երևան: Բարձրանում էր հանրակացարան ու սեղանին շարում մայրիկի ուղարկած մթերքներն ու տալիս որոշակի գումար. «Էս էլ պապան ա տվել»: Մի անգամ ասաց.

-Մաման ու պապան քեզ ավելի շատ են սիրում, քան ինձ ու Սերոբին, ջոկոդություն են անում:

-Դե, տան փոքրերը չգրված արտոնություն ունեն,- կարևորություն չտալով Հունանի ասածին՝ ծիծաղեց ու շարունակեց վայելել մայրիկի թխած գաթան:

Հետո, տարբեր առիթներով ու տարբեր երանգներով «ջոկոդության» ակնարկներ էլի են եղել, ինքը էլի դրանց կարևորություն չի տվել:

Չարաբաստիկ ութ հարյուր ռուբլի գումարի ուրացումը ի՞նչ կապ ունի այդ կարծեցյալ «ջոկոդության» հետ: Իսկ գուցե ազատագրկման տարիների նվաստացումները, այդ միջավայրի վայրի ու անբարո

-19-

բարքերը չարացրե՞լ են նրա միտքն ու հոգին, կյանքի գարշահոտ հատակում ապել է այնքան տարիներ, որքան պետք էր կրթություն ու մասնագիտություն ձեռք բերելու համար: Անկասկած, կենսագրության մեջ դաջված այդ խարանը միշտ Հունանի մեջ է. ճիշտ է՝ բնակության վայրը փոխվել է, նրա վերադարձից հետո ընտանիքում այդ մասին երբեք չեն խոսել, թեման խեղդել ու թաղել են, բայց հնարավոր է մոռանալ տառապանքի ու կարոտի. ամոթի ու մեղանչումի այդ տարիները: Հնարավոր չէ, Հունանի համար՝ առավել ևս: Սակայն ինքն ու Սերոբը ինչո՞վ են մեղավոր. ինքը ընդամենը վեց տարեկան էր, Սերոբը՝ տասնչորս: Մեղադրում է հայրիկի՞ն, որ կարող էր որդուն կալանքից ազատել երկու հարյուր ռուբլով, բայց չարեց, մայրիկի՞ն, որ կարող էր համոզել բարկությունից կոպտացած ամուսնուն: Այդ ամենը փոխե՞լ են Հունանին այնպես, որ նա կարող էր յուրացնել Սերոբի սեփական ութ հարյուր ռուբլին, յուրացնել և ուրանալ... Իսկ գուցե Հունանը շփոթու՞մ է, նրան այն օրը թվացել է, որ Հակոբը սեղանի վրայից վերցրել է գումարը ու տարել... Ո՛չ, չի շփոթում. նա հանգիստ, առանց գործից կտրվելու ասաց. « Բայց դու տարել ես ». ասաց՝ առանց իր դեմքին նայելու, առանց զարմանալու: Ի վերջո՝ գումարը մնացել է Հունանի տան սեղանին. ջուր չէր, որ գոլորշիանար ու Հունանը չնկատեր: Ուրեմն, Հունանը ստում է, Հունանը՝, իր պաշտելի եղբայրը, իր մեծը, իր նեցուկը...

Օրեր անց Հակոբը գնաց խնայողամարկղ և Սերոբի երկու երեխաներից յուրաքանչյուրի անունով չորս հարյուր ռուբլու ավանդ ձևակերպեց: Վկայականները դրեց աշխատավայրի չիրկիզվող պահարանում: Նա այդ մասին ոչ ոքի չասաց՝ որոշելով, որ դրանք երեխաներին կփոխանցի նրանց տասնութ տարեկան դառնալու օրը, կփոխանցի որպես ծննդյան օրվա անակնկալ նվեր: Դրանով կարծես հոգին ազատեց գրեթե երեք տարի հետապնդող մեղքի զգացումից: Սակայն արդեն նրան սկսեցին մտահոգել երկու բաբախուն հարցեր. մեկը, որ դարձել էր կաշուն ու տոխայ, Հունանի հետ հետագա շփումների հարցն էր. կկարողանա՞ ինքն իրեն հաղթահարել ու հարաբերվել Հունանի հետ այնպես, կարծես ոչինչ չի եղել: Պե՛տք է կարողանա, պե՛տք է...: Մյուսը. Սերոբին ասի՞, թե՛ չասի երեխաների անունով ավանդ ձևակերպելու մասին, եթե ասի, ապա՝ ե՞րբ, ինչպե՞ս: Եթե չասի, ապա մինչև երեխաների տասնվեց տարեկան դառնալը առնվազն հինգ տարի կա, այդ ընթացքում ո՞վ գիտի՝ ինչե՞ր կարող են լինել այս խառն ժամանակներում. եթե իր հետ վատ բան կատարվի՝ ի վերջո աշխատասենյակի պահարանից կգտնեն վկայականներն ու կտան

ըստ պատկանելույն, իսկ եթե, աստված չանի, Սերոբի հետ վատ բան կատարվի՞... Նա այդպես էլ չի իմանա, որ Հակոբը երեխաներին է

-20-

վերադարձրել այդ գումարը:

Ամեն անգամ, հայտնվելով այսպիսի հարցերի հորձանուտում և որոշակի պատասխան չգնելով՝ որոշում էր թողնել ամենազոր ժամանակի հայեցողությանը: Իսկ ժամանակը իր անակնկալը մատուցեց. 1991 թվականի մարտին Սերոբին հրավիրեցին զինտեղամաս և առաջարկեցին մեկնել Արցախ որպես ռազմաճակատի ռադիոկապի տեխնիկ: Հաշվի էին առել, որ նա պարտադիր զինվորական ծառայության ընթացքում ձեռք էր բերել նման փորձառություն և հիմա՝ Արցախի համար այս տազնապալի օրերին, կարող էր օգտակար լինել: Հաջորդ օրն էլ Սերոբը մեկնեց: Հրաժեշտի պահը հարմար չէր, որ Հակոբը նրան ասեր այն, ինչ ժամանակ առ ժամանակ ցանկացել էր ասել:

Քունը ավելորդ հյուրի պես լուռ ու մունջ հեռացել էր Սերոբից ու Անուշից, կորել կեսգիշերային թանձր խավարում: Հեռու-հեռվում կայծակի լույսը թարթվեց, հետո ամպրոպի խուլ որոտին հետևեց անձրևի տեղատարափը: Մի անթարգմանելի տազնապ խցկվել էր ամուսինների միջև: Երկուսի ուղեղում էլ անընդհատ նույն միտքն էր պտտվում. «Տեր աստված, մի՞ թե կարող է սա լինել միասին լինելու մեր վերջին գիշերը...»: Սերոբը վաղ առավոտյան պետք է մեկներ:

-Սերոբ, քեզ ասելու բան ունեմ,- շնչաց Անուշը:

-Ասա:

-Էն ութ հարյուր լուրլին...

-Գիտեմ,-ընդհատեց Սերոբը,- պետք չի...

Լռեցին: Հետո Անուշը շարունակեց.

- Բայց դու չգիտես, թե այդ գումարն ի՞նչ եղավ:

- Արդեն կարևոր չի. անցած-գնացած բան ա:

-Մի օր ցեցի թիթեռներ նկատեցի մամայի շորերի դարակի մոտերքում,- շարունակեց Անուշը,- որոշեցի դարակը դատարկել ու գտնել ցեցի օջախը: Մամայի բրդե շալի վրա ցեցի թրթուրներ գտա, բայց նաև՝ այդ գումարը: Հաշվեցի. ութ հարյուր ռուբլի: Միրոս սկսեց ուժգին բաբախել, կարծես բռնվել էի գողության մեջ: Արագ նորից դրեցի տեղն ու պղտոր մտքերը պաշարեցին ինձ. որտեղի՞ց մամային այդքան գումար և ինչու՞ է թաքցրել, ումի՞ց է թաքցրել, ինչի՞ համար: Ես այդ հարցերի պատասխանը չունեի: Աղջիկ էլ չունի, որ մտածեի. աղջկան տալու

համար: Ես էլ, դու էլ ամեն ամիս մեր աշխատավարձը տվել ենք իրեն ու հետո ծախսերի համար իրենից ենք փող ուզել: Ժամանակ առ ժամանակ նա տնտեսած գումարը տվել է քեզ՝ բանկի գումարի վրա ավելացնելու:

-21-

համար: Նույնիսկ մի անգամ էլ ինձ գումար տվեց, որ իմ անուով էլ բանկում գումար լինի: Ասաց. «Կարող ա մի օր վռագ փող պետք լինի, բայց Սերոբը տանը չլինի՝ դու գնաս՝ բանկից հանես»: Էդ օրվա գտածու գումարը ցնցեց ինձ, իմ մեջ գլուխ բարձրացրեց վիրավորանքը: Սկսեցի հիշել քանի-քանի դեպքեր, որ մեզ փող տալուց առաջ անպայման քննարկում էր, թե ի՞նչ պարտադիր է այդ ծախսն անելը, թանկ է կամ՝ ավելորդ: Դե, դու գիտես: Հիշեցի, որ մի անգամ փող ուզեցիր մեկին պարտքով տալու համար, մաման հետաքրքրվեց, թե ո՞ւմ ես տալու, հետո էլ ասաց. «Էն ի՞նչ մարդ ա, որ նրան փող ես խոստացել»: Բարկացար ու դուռը շրխկացնելով դուրս գնացիր: Ու էլի եղպիսի բաներ: Այդ օրը իմ մեջ արթնացավ զայրույթը այն բանի համար, որ ընտանիքի աշխատողները ես ու դու ենք, բայց իրավունք չունենք ինքնուրյուն տնօրինել մեր վաստակը, երեխայի պես պետք է հաշվետու լինենք: Իսկ ահա ինքը մեր վաստակից թաքուն հավաքել ու պահել է:

- Այդքանը ես ենթադրել եմ,- ընդհատեց Սերոբը, - ենթադրել եմ ու հասկացել, դրա համար էլ քեզ հարցեր չեմ տվել: Ես գիտեի, որ մի օր խոսելու ես: Այնպես, ինչպես դու ես վիրավորվել մամայից, այդպես էլ ես եմ վիրավորվել քեզանից...

- Ինձանի՞ց, ինչի՞ համար,- շփոթվեց Անուշը:

- Որ ինձ հետ չես կիսվել: Ստացվում է, որ դու էլ ինձանից ես թաքցրել կատարվածը: Իսկ մեր մեջ մինչ այդ օրը ոչ մի գաղտնիք չի եղել: Իսկ գուցե եղել է ի՞նչ իմանամ...

-Չէ, չի՛ եղել...: Հա, դու ճիշտ ես, մեր միջև ոչ մի գաղտնիք չի եղել, Սերոբ ջան: Հետագա բոլոր տարիներին ինքս ինձ մեղադրել եմ եղ գումարի պահը քեզանից թաքցնելու համար: Բայց առաջին օրը համարձակություն չունեցա, որ քեզ ասեմ, վախենում էի, որ քո և մամայի միջև բախում կլինի, իսկ հաջորդ օրը...

Նորից կայծակի լույսը ճեղքեց դրսի ու ներսի խավարը, նորից գիշերը որոտաց ավելի ուժգին ու չարագուշակ, հորդառատ, կարկտախառն անձրևը ծեծում էր լուսամուտը: Մի քանի րոպեից լուսամուտի աղմուկն սկսեց մարել:

-Հաջորդ օրը տանը մենակ էի՝ իմ պղտոր մտքերի հետ,- շարունակեց Անուշը: - Եկավ Արշոն, հարևանը չէ. եղբայրս: Գյուղից էր գալիս, այլալված, հուսահատված ու շփոթված: Հիշում եմ. բանակում ծառայող Արմենի հետ ինչ-որ դեպք էր պատահել: Պետք է շտապ գնար, սակայն

գումար չունենալ: Նա ինքն էլ չգիտեր, թե այստեղից Վլադիվաստոկ գնալ-վերադառնալը ի՞նչ կարժենա, որդու հետ կատարվածը ի՞նչ ծախսերի տակ կդնի իրեն: Որոշ գումար գյուղի հարևաններից ու բարեկամներից

-22-

էր վերցրել: Բայց ավելին էր պետք: Եկել էր քեզանից պարտքով փող խնդրելու: Այս ամենը լսելուց հետո մտքովս այդ ութ հարյուր ռուբլին անցավ: Ու մինչ սեղանին ուտելիք դրեցի- հավաքեցի, սուրճ եփեցի՝ արդեն հաստատապես որոշեցի, որ այդ գումարը ե՛ս եմ տալու Արշոյին, տալու եմ անվերադարձ և որպեսզի նա վերցնի, հորինեցի, իբր դա իմն է ու մինչ ամուսնանալս եմ ունեցել, դրա մասին ոչ ոք չգիտի ու հիմա մեծ բան չի, որ քույրը գումարով օգնի փորձանքի մեջ հայտնված եղբորը: Սկզբում Արշոն հրաժարվում էր, սկսեց ինձ նախատել, որ մի տան մեջ համատեղ ապրելով՝ ես ամուսնուցս ու սկեսուրիցս գաղտնի գումար եմ պահել: Ասում էր, որ եթե իր կինը նման բան անի՝ ինքը նրան երբեք չի ների: Ես պնդեցի ու նա տեղի տվեց, փողը վերցնելով՝ վերադարձավ գյուղ: Ես նրան շատ խնդրեցի, որ ոչ ոքի երբեք չասի այդ մասին, նույնիսկ պահանջեցի, որ երդվի Արմենի անունով: Նրա գնալուց հետո կորցրեցի հոգեկան հանգստությունս. մինչ երեկո արդեն զոջում էի, դատապարտում էի ինձ. պահի տակ՝ հանկարծակի մղումով նման քայլի գնալու համար: Ամեն օր, ամեն ժամ սպասում էի, որ ահա, մաման կհայտնաբերի փողի կորուստը: Ի՞նչ կասի, ինչպե՞ս կբացատրի գաղտնի փող ունենալը, կկարողանա՞մ ինքս ինձ չմատնել: Այդպես անցավ համարյա չորս ամիս, մինչև մաման մի օր ինձ հարցրեց.

- Իմ շորերի դարակում գումար կար, կարո՞ղ ա տեղյակ ես:

- Չէ, տեղյակ չեմ,- ստեցի ու անմիջապես հարցրեցի,- ի՞նչ գումար էր:

- Հակոբն էր տվել, որ պահեմ մեր տանը,- հուզված ասաց մաման- իր բնակարանի բանալիից տանտերն էլ ունի, կասկածում էր, որ մի օր իր ու Սոնայի տանը չեղած ժամանակ տանտերը կարող ա գա, փնտրի, գտնի ու վերցնի:

Ես շանթահար եղա... Ինքնադատափետումի, մեղանչումի ծանրության տակ երկու օր հիվանդ պառկեցի: Հիշո՞ւմ ես, այն օրը, որ բանկից գումարը բերեցիր ու տվեցիր մամային, որ տա Հակոբին՝ ես աշխատանքի չգնացի, հիվանդ էի, սաստիկ գլխացավ ունեի ու ինձ թվում էր, որ էլ երբեք ուժ չեմ ունենա ոտքի կանգնելու:

-Հիշում եմ,- արձագանքեց Սերոբը,- ես այն ժամանակ հասկացա, որ դու կապ ունես գումարի կորստի հետ, նույնիսկ մի քանի օր սպասում էի, որ դու կասես այդ մասին և գումարն էլ ետ կբերես: Բայց հետո հասկացա. ուրեմն, քեզ համար դա անելը անհնար է: Մտածում էի. գուցե

գայրութի պոռթկումի պահին այրել ես կամ պատառոտել և այդ գումարը այլևս չկա: Արշոյի Վլադիվաստոկ գնալ-գալը, դրա համար պարտքով գումարներ հավաքելը իմացել եմ ու, ճիշտն ասած, իմ մեջ նեղացել եմ,

-23-

թե ինչու՞ ինձ էլ չի դիմել: Ուրեմն այդպես է եղել, ահա թե ինչ...

- Հա, մեղավոր եմ... Քեզ պատմեցի՝ թեթևացա: Մամային չեմ կարող պատմել, նա էլ է համոզված, որ ես կապ ունեմ այդ գումարի կորստի հետ, բայց մինչև օրս ոչ մի անգամ չի խոսել այդ մասին:

-Ես չեմ թողել: Ասել եմ, որ դա բացարձակապես իմ գործն ա: Բարով-խերով պատերազմը ավարտվի ու վերադառնամ՝ ես ինքս մամային ամեն ինչ կպատմեմ, նա կհասկանա:

Հետո Մերոբը պատմեց Հունանի տանը գումարն իրեն վերադարձնելու համար տեղի ունեցածը.

-Մինչև օրս չգիտեմ. գումարը ի վերջո Հակոբը վերցրե՞ց, թե մնաց Հունանի մոտ: Երկու դեպքում էլ ինձ հանգիստ եմ զգում. իմ եղբայրներն են՝ ուրիշ չեն: Կարևորը, որ ես ճիշտ եմ վարվել: Իմ տանից էր գումարը կորել՝ ես էլ պետք ա փոխհատուցեի, այլապես ես էլ իմ ձևով կտառապեի ու ինձ չէի ների: Իսկ որ Արշոյին օգնել ես՝ դու էլ ես ճիշտ վարվել. նա էլ ուրիշ մեկը չի՝ քո եղբայրն ա: Մեր խնայողությունների մեջ հավասարապես դու էլ քո բաժինն ունես. միասին ենք աշխատել, վաստակել: Ինչ եղել՝ եղել ա. անցած լինի:

Անուշը հանկարծական բռնկումով գրկեց Մերոբին ու փղձկաց.

- Մերոբ ջան, քեզ կպահպանես, առանց քեզ ես չեմ ապրի...

- Ինձ հետ ինչ էլ լինի՝ դու պետք ա ապրես, ավելի ուժեղ լինես: Մամային, երեխաներին քո հույսին եմ թողնում...

Արդեն լուսանում էր:

1993 թվականի նոյեմբերի քսանմեկն էր, սովորական աշնանամուտի մի օր, որ դանդաղորեն ազատվում էր գիշերային խավարից: Երևանի ավտոկայարանի սպասասրահի եռուզեռից պոկվելով՝ Հունանը գնաց դեպի Սոչի մեկնող ավտոբուսը, ճամպրուկը տեղավորեց, բարձրացավ ու նստեց տոմսում նշված նստարանին: Արագ տեղավորվեցին նաև մյուս ուղևորները և արդեն ժամն էր շարժվելու: Նա նկատեց, որ ավտոբուսից քիչ այն կողմ երկու երիտասարդներ վարորդին ինչ-որ բան էին համոզում, կարծես վարորդը չէր

համաձայնվում, բայց հետո ժամացույցին նայեց, ձեռքով համաձայնության նշան արեց ու գնաց սպասասրահի կողմը: Երկու երիտասարդները արագ բարձրացան ավտոբուս ու նրանցից մեկը բարձր տոնով շուտասելուկի պես հայտարարեց.

- Ժողովուրդ ջան, ինձ վռագ ոսկի ա պետք, արժեքի կրկնակին եմ

-24-

տալիս: Ճանապարհ եք գնում, փողի կարիք կունենաք: Գիտեմ, բանկերը փող չեն տալիս: Ինձ շատ վռագ ա պետք: Կապ չունի՝ ժամացույց լինի, մատանի, վզի շղթա, միայն ոսկուց լինի, տեղն ու տեղը վճարում եմ: Երկրից դուրս եք գնում, ուրիշ տեղում ապահով էլ չի ոսկի ունենալը. մոտներիցդ կհափշտակեն, կգողանան: Դե, ժողովուրդ ջան, ձեն հանե՛ք:

Ավտոբուսում մի պահ լռություն էր: Հետո առաջինը մի կին ականջողերը առաջարկեց, առանց սակարկելու գնեցին, այնուհետև ակտիվ առևտուր սկսվեց: Պահ եղավ, որ Հունանը ևս ցանկացավ մասնակցել դրան, բայց հետո միտքը փոխեց: Ճիշտ է, ավտոբուսի տոմսը գնելուց հետո չնչին գումար մնաց մոտը, բայց տեղ հասնելուն պես իրեն դիմավորելու էր Պավելը՝ կալանավայրի իր ընկեր Պաշան, որի հետ նամակագրություն ուներ: Նա իր հետ նստած էր շինծու քրեական գործով, բայց իրականում այլախոհության պատճառով: Ազատվելով, տարիներ անց, գորբաչովյան դեմոկրատիայի հռչակումից հետո դիմել էր ուր որ հարկն է և հասել էր պաշտոնապես արդարացման: Բարձրագույն կրթություն ուներ ու հիանալի մարդ էր: Նա հիմա Մոչիում ավտպարկի գլխավոր մեխանիկ է և հուսալի խոստումներով է իրեն կանչել. անվճար կացարան և սկզբի համար կանխավճար: Այնպես որ, պետք չէր կնոջ կողմից իր պիջակի ծոցագրպանի խորը անկյունում ամրացրած երկու ոսկյա մատանիները ձեռքից հանել. ով գիտի՝ գուցե մի ավելի կարևոր պահի պետք ասի:

Այո, դեռևս անցյալ տարվա հունվարից նախ լուրեր տարածվեցին, որ խնայբանկերը դադարեցրել են ավանդների գումարների վերադարձը, այնուհետև լուրերը իրականություն դարձան: Օր-օրի թափ առնող գործազրկության չարագուշակ ալիքը կարիքի ու անորոշության էր մատնել հազարավոր մարդկանց: Նրանք տենդագին էլք էին փնտրում: Սկսեցին հիշել Ռուսասանում բնակվող ուսանողական ընկերներին, բանակում միասին ծառայածներին, բարեկամներին ու խնամիներին: Մեկնում էին տան վերջին կոպեկներով, քանի որ խնայողությունները խնայբանկերում անբացատրելի փակի տակ էին: Ճանապարհաձախսի համար ոսկյա զարդերը, անձնական ավտոմեքենաները, նույնիսկ կենցաղային իրերն էին վաճառում: Հունանը նրանցից մեկն էր. ընկճված, մտացրիվ, անցյալի հուշերով. կկարոտի, այն էլ ինչպե՛ս կկարոտի, ախր քաշել է, գիտի՛ ...

Ոսկու գնորդները շատ արագ ավարտեցին իրենց առևտուրը, ընդառաջ գնացին մոտեցող վարորդին, գումար տվեցին նրան ու մտան կողքի ավտոբուսը: Հունանը նայեց ժամացույցին. շարժվեցին քսան րոպե ուշացումով: Ակնհայտ էր, որ կողքի ավտոբուսում էլ է նույն առևտուրը ծավալվելու: Դա այնքան էլ չհետաքրքրեց Հունանին. նա իր

-25-

մտքերի ու հոգսերի հետ էր. կհասցնի՞ մինչև ամառ գումար տնտեսել այնքան, որ կարողանա այս տարի դպրոցը գերազանցությամբ ավարտող որդուն օգնել՝ բուհ ընդունվելու և Երևանում բնակվելու համար:

Սոչիում Հունանին դիմավորեց Պավելը՝ տիկնոջ հետ: Հրավիրեցին առաջին օրը իրենց տանը մնալ: Հրաժարվեց՝ խոստանալով առաջիկա կիրակի այցելել նրանց: Միասին գնացին կացարան: Այն լուսավոր ու հարմարավետ սենյակ էր՝ ջեռուցումով, լոգարանով, սանհանգույցով, սառնարանով ու հեռուտացույցով, սեղան-աթոռներով, երկու մահճակալով:

-Այս մի մահճակալը մեր հաշվապահինն է, քիչ հետո նա կգա՝ կծանոթանաք,- ասաց Պավելը: -Քո հայրենակիցն է՝ Հայաստանից, անունը՝ Սամսոն: Գրագետ ու պարկեշտ մարդ է: Մեր նախկին հաշվապահը հարբեցողի մեկն էր, նրա սխալների պատճառով մեծ տույժերի ու տուգանքների երթարկվեցինք: Լավ է, փառք աստծո, Սամսոն Վարդանիչը մեզ հանդիպեց: Հիմա ամեն ինչ լավ է:

Պավելի գնալուց քիչ անց ներս մտավ Սամսոնը ու այնպես ջերմորեն սեղմեց Հունանի ձեռքը, ասես վաղուց էր ճանաչում:

- Պավելը քո մասին շատ ա պատմել, անհամբեր սպասում էի: Մոտակա խոհանոցից եմ գալիս, խոհարարը հայ ա, խորոված էի պատվիրել, գնացել-բերել եմ: Պետք ա նշենք մեր ծանոթությունը, Հունան ջան: Էս ի՞նչ հաջողություն էր քո գալը: Ոչ մի բանի մասին չմտածես:

Սամսոնը Հունանի տարիքի տղամարդ էր, անմիջական, շենխոսք, հումորով: Մի քանի ժամ հարցեր տվեց, իր մասին պատմեց, միմյանց մասին համարյա ամեն ինչ իմացան: Խոսք ու զրույցի մեջ Հունանը պատմեց նաև Երևանի ավտոկայարանում ավտոբուսների մեջ ոսկու առևտրի մասին:

- Էդ լավ նշան չի, ջանս, լավ նշան չի,- արձագանքեց Սամսոնը:

- Ի՞նչ նշան...,- զարմացավ Հունանը:

- Լավ նշան չի,- կրկնեց Սամսոնը ու կարծես տրամադրությունն ընկավ: Քիչ լռելուց հետո ասաց,- ուրեմն էսօր-վաղը Հայաստանում փողը կփոխվի: Ախր ես զգում էի, ես կասկածում էի... Լսել էի, որ Հայաստանում խնայողական ավանդները չեն տալիս, ուրեմն չեն էլ տա, կամ որ տան էլ՝ ինչների՞ս ա պետք. ի՞նչ պետք ա գնենք՝ դափ ու դատարկ են խանութները:

-Ո՞նց թե չեն տա,- զարմացավ Հունանը,-պետությունը ո՞նց կարա ժողովրդի գումարները չտա, ո՞նց կարա յուրացնի:

- Չի յուրացնի, ջանս, չի յուրացնի, փողը ինքն իրեն արժեզրկվել ա: ՄՍՀՄ հանրապետությունները կունենան իրենց ազգային արժույթը, որովհետև ՄՍՀՄ-ը իր փողերի հետ երկու տարի առաջ անվերադարձ

-26-

գնացել ա գրողի ծոցը: Հայաստանն էլ կունենա իր ազգային դրամը, արագ կփոխանակեն մարդկանց ձեռքի կանխիկ գումարները և խնայողությունները, բայց դրա համար կսահմանեն որոշակի չափաքանակ: Ո՞վ չգիտի, որ եկամտաբեր գործի վրա գտնված մարդիկ հսկայական ձախ եկամուտներ ունեն իրենց տներում թաքցրած: Համապատասխան մարմինները կկանչեն, կասեն. որտեղի՞ց քեզ այդքան գումար, որ բերել ես փոխանակելու: Այ, ավտոկայարանի էդ տղաներն, ուրեմն, ինֆորմացիա ունեն ու իրենց ձեռքի գումարներից ազատվում են, քանի ուշ չէ: Հնարավոր ա, որ նրանք վարձված լինեն խոշոր փողատերերի կողմից: Բացի դա, օրինական խնայողություններն էլ ազգային դրամով փոխանակելը կգրեն բանկային գրքույկում, բայց հետո դեռ երկար ժամանակ գումարը չեն տա տերերին, որովհետև չունեն, որովհետև չեն կարողանա, որովհետև տնտեսությունը անկում ա ապրում, որովհետև եղածը փոշիացվում ա, յուրացվում, թալանվում: Ժամանակի ընթացքում էդ փոխանակվածն էլ էնքան կարժեզրկվի, որ կդառնա ջուր: Այ, էդպես, ջանս, Եթե ՄՍՀՄ բանկի տեղն իմանաս, ինձ էլ կասես, գնանք մեր փողերն ուզենք: Ես էլ մինչև իննսուն թվականը մի ահագին փող եմ տվել էդ բանկին:

Հունանը դժվարությամբ էր ընկալում լսածը և հետո ներքին տազնապը ճնշելով՝ հարցրեց.

- Բա էն անտոկոս փոխառությունները՞...

- Դրանցից դու էլ ունե՞ս:

- Հա, «Ժիգուլի» եմ գրվել ու տվել եմ ութ հազար ռուբլի:

- Կստանա՞ս, բա չէ՞...-չգիտես՝ ու՞մ վրա՝ չարախնդաց Սամսոնը:

-Երեխեքի անունով էլ ավանդներ կան բանկում. բարձր տոկոսներով...,- հուսալքված մրմնջաց Հունանը:

- Դրանք էլ... Այն ամենն, ինչի վրա գրված ա. ՄՍՀՄ բանկ՝ արդեն դեն նետելու թուղթ ա,- բացատրեց Սամսոնն ու լռեց:

Դառնությամբ ու անորոշությամբ պարուրված լռության մի քանի րոպեներ անցան: Հետո Սամսոնն սկսեց սեղանը հավաքել.

- Վեր կաց, պառկիր՝ հանգստացիր, ահագին ճանապարհ ես եկել: Վաղը գործի ես: Ասեմ. էնտեղ՝ բրիգադում, հինգ հոգի են. երեքը ռուս ավկաշներ են, բայց լավ են աշխատում, ոչինչ, որ աշխատավարձի հաջորդ մեկ-երկու օրը անջատված են լինում, հետո լրացնում են

չարածը: Մյուս երկուսից մեկը վրացի է, մյուսը՝ ուզբեկ: Լավ տղաներ են: Քնի՛ր: Բարի գիշեր:

- Բարի գիշեր,- ասաց Հունանն ու պառկեց: Բայց երկար ժամանակ քունը չէր տանում: Եթե տնտեսագիտական բարձրագույն կրթություն ունեցող Սամսոնի կանխատեսումը ճիշտ է, համարյա քսան տարվա իր վաստակն էր փոշիանում: Փոշիանում էին նաև Սերոբի ու Հակոբի խնայողությունները...

-27-

Հաջորդ օրը, երեկոյան հեռուստացույցով լուրերի թողարման ժամին, Հունանն ու Սամսոնը անթաքույց լարվածությամբ էին լսում հաղորդումն այն մասին, որ Հայաստանի կառավարությունը դրամական ռեֆորմ է իրականացնում և շրջանառության մեջ է դրվում ազգային արժույթը: Անտոկոս փոխառությունների մասին՝ ոչ մի խոսք: Նորից Սամսոնը գիտակ մարդու պատրաստակամությամբ սկսեց վերլուծություններ ու կանխատեսումներ անել և երբ թեման սպառեց, լույսն անջատեց ու պառկեցին քնելու, հարցրեց.

- Շա՞տ փող ունե՞իր հավաքած:

- Դե, կար էլի...,- անորոշ փնթփնթաց Հունանը:

- Ասեմ, թաքցնելու բան չունեմ, ջանս, ես բանկում ունեմ տասնութ հազար ռուբլի, բայց դա իմ աշխատավարձը չի: Հարցրու՝ բա ի՞նչ ա:

- Ի՞նչ ա...,- անակնկալի գալով հարցը կրկնեց Հունանը:

- Ջրի բերած: Ջրի բերած փող էր, Հունան ջան, դե լսի՛ բացատրեմ: Երեկ պատմեցի չէ՞, որ մինչև այստեղ գալս տասներկու տարի դասախոս էի աշխատում: Երբ սկսեցի աշխատել՝ ինքս ինձ երդվել էի, որ ոչ մի դեպքում գնահատականի կամ այլ պատճառով ուսանողից փող չեմ վերցնելու: Հենց առաջին տարվա կիսամյակային քննությունների օրերին ես խնդիրների մեջ ընկա. սկզբում քննության ներկայացած ուսանողները լավ պատրաստվածներն էին, հաճույքով էի լսում ու հիանում: Հետո ներս եկողները այնքան էլ պատրաստ չէին, բայց դա էլ է նորմալ, դե հո բոլորը գերազանցիկներ չեն լինում: Բայց վերջում, մոտ մի տաս-տասներկու ուսանող ներս չեն գալիս, խուսափում են, կարծես ինչ-որ մեկին են սպասում: Ներս մտավ դեկանը, հետաքրքրվեց ընթացքից ու հետո հորդորեց. «Էս սպասողներին ընդառաջի՛ր, առաջին կուրսում պետք չէ կոտրել, հլա երեխա են, հուզվում են, դեռ չեն հարմարվել, բոլորին էլ բավարար դի՛ր: Հետո՝ հաջորդ կուրսերում խիստ կլինենք»: Իրա գնալուց հետո մեկիկ մեկիկ ներկայացան սպասողները՝ լրիվ անպատրաստ: Հետները մի քիչ զրուցեցի ու «բավարար»-ը դրեցի: Մի քանի օր անց մոտ ընկերս ասաց. «Միամիտ չլինես. կուրսի ավագը դրանցից գումարները հավաքում ու դեկանին ա տալիս: Դեկանը նորանշանակ դասախոսների հետ եղպես ա աշխատում՝ մինչև առերես պայմանավորվելը: Երբ սկսես դիմադրելը՝ նա քեզ հետ հաշվի կնստի»: Էղպես էլ եղավ: Ես, որ երդվել էի, թե ոչ մի դեպքում ուսանողից փող չեմ

վերցնելու՝ դեկանի հորդորներն ու բացատրությունը ինձ համոզեցին մոռանալ երդմանս մասին. «Այդ ուսանողները հենց այդպես էլ ընդունվել են,- բացատրեց դեկանը,- միջակություններ են, աշխատասիրություն չունեն, բայց ունեն հզոր պապաներ, քեռիներ, հորեղբայրներ և այլն, որոնց միջնորդությունը մերժելը ոչ միայն իմ, այլև ռեկտորի ուժերից է վեր: Այդ հզորների

-28-

սանիկները ուրախությամբ են փողը դեմ տալիս, բայց եթե փողը մերժվում է՝ սկսվում են զանգերը, պահանջները, սպառնալիքները և ի վերջո հասնում են իրենց նպատակին: Դե, եթե ի վերջո պետք է ավարտացնենք էդպիսիներին՝ էլ ինչու՞ բարդացնենք մեր կյանքը, անախորժությունների մեջ ընկնենք, միմյանցից նեղանանք: Կվերցնենք առաջարկված փողը. համարենք ջրի բերած, ու թող ավարտեն գնան: Այդպես եղել է, այդպես էլ կշարունակվի: Մենք ոչինչ փոխել չենք կարող»: Ահա, ջանս, ես այսպիսի վերադաստիարակում ստացա մեր դեկանից: Տարիների ընթացքում իմ ընտանիքը պահեցի աշխատավարձով, իսկ այդպես ստացված՝ ջրի բերած փողը ես հավաքում էի խնայորամարկդի գրքույկում: Իմ խիղճը մաքուր է, ես ոչ մեկից գնահատականի դիմաց փող չեմ պահանջել, առաջարկել են դրական գնահատական ստանալու համար՝ վերցրել եմ: Թող պարապած գային, մի բան էլ բարձր կգնահատեի: Չհավատաս նրանց, որ ասում են. լավ պատասխանեցի, բայց փող չէի տվել՝ դասախոսը չդրեց: Էդպես չի լինում, Հունան ջան: Այ, բարով-խերով տղադ ընդունվի ու լավ սովորի՝ դու էլ կհամոզվես:

Հունանը լուռ էր: Հետո ուշացած արձագանքեց.

-Հա, տղաս լավ կսովորի...

Սամսոնը լռեց, շրջվեց դեպի պատը և քիչ անց նրա համաչափ շնչառությունը Հունանի մտքերի ընթացքին ազատություն տվեց. և՛ իր, և՛ Սերոբի ու Հակոբի խնայողությունները դարձել են անցած-գնացած փողեր, ութ հարյուր ռուբլին Հակոբի մո՞տ, Սերոբի՞, թե՛ Հունանի. արդեն կարևոր չէ, որովհետև արդեն ոչինչ է: Բայց այդ գումարի ուրվականը, որ այս մի քանի տարին կառչած էր իրենից. չէր հեռանում, հոգի ու մարմին դարձած, ժամանակ առ ժամանակ, նվնվում էր, թե՛ «ես կամ, այստեղ եմ...», ահա այստեղ, օտար երկրի այս կացարանում, այս գիշերաժամին նորից է նվնվում. «...ես կամ...»: Ճիշտ են ասում. փողը ձեռքի կեղտ է: «Ո՛չ, ձեռքի կեղտ չեմ, ձեռքի կեղտը կարելի է մեկ բաժակ ջրով լվանալ... Ես ամեն-ամեն ինչ եմ, առանց փողի մարդն է կեղտ. կտրորեն ու կանցնեն: Մի՞ թե փողի համար չես ընտանիքդ թողել ու հասել այտեղ, չգիտես էլ, թե ու՞մ ես ծառայելու: Մի՞ թե փողի համար չի Սամսոնը այստեղ»: Լավ, թող քնեմ, հոգնած եմ, հոգնա՛ծ եմ...: «Ես կամ, այստեղ եմ,-շարունակեց նվնվալ ուրվականը,- որովհետև Սերոբը

հեշտությամբ լքեց ինձ, չնայած իր արդար վաստակն էի, Հակոբը կարևորություն չտվեց, խաղաղ հեռացավ, նույնիսկ մի անգամ հիշեց իմ մասին ու եկավ տիրություն անելու՝ դու չքմեղացար, քանի որ արդեն քեզնով էիր արել, միացրել էիր քո փողերին ու տվել բանկին, սիրտդ «ժիզուլի» էր ուզում, բա ո՛նց...Ես՝ ութհարյուր ռուբլիս, այդ փողերից զատվեցի ու մնացի քո խղճի մի մութ անկյունում...» : Ով՞ էր խնդրել, որ

-29-

քեզ բերեցին ու թողեցին ինձ մոտ,- հակադարձեց,- մի մոռացիր, որ ես նույնիսկ տեսարան հորինեցի, իբրև թե դու գտնվել ես պապայի բաճկոնի գրպանում, թող Սերոբը վերցնեք ու սուս ու փուս հեռանար, բայց չէ. նոր եկած ձյան վրա հետքաբանական փորձաքննություն կատարեց: Հակոբն էլ քեզ թողեց ու հեռացավ, ասում էր, որ իր ութ հարյուր ռուբլին ջրի բերած-ջրի տարած էր: «Դա քեզ համար չի ասել, այլ՝ Սերոբի ու մայրիկի. որ նրանք շատ չնեղվեն»: Դու մնացիր իմ տան սեղանին դրված, ի՞նչ անեի. այրեի՞, թե՛ պատառոտեի ու քամուն տայի... «Չէ՛, ոչ՝ այս, ոչ՝ այն,- նորից նվնվաց ուրվականը,-այդպես էլ ասեիր Հակոբին, ոչ թե՛ «Դու տարել ես...»: Հակոբը թող պնդեր,- փորձեց արդարանալ: «Ուրիշ մեկի դեպքում, այո, կպնդեր, կվիճեր, կպահանջեր, կբողոքեր», - ուրվականը արդեն ոչ թե նվնվում, այլ չարախնդում էր,- «Հակոբն անսահմանորեն վստահում էր, հարգում էր, սիրում էր քեզ, դու թանկ էիր նրա համար: Շա՛տ, շա՛տ թանկ, քան ես, քան իմ հազարապատիկը»: Հիմա էլ չի՞ վստահում, էլ չի՞ հարգում, էլ չի՞ սիրում...,- տազնապած մրմնջաց Հունանը: Ուրվականը լուռ էր, հետո չարագուշակ փսփսաց. «Ես չեմ արժեզրկվել... Ես անցած-գնացած չեմ...Ես կամ..., ես կամ... ես միշտ լինելու եմ...»:

Վերջ

30.06.2018

